Հայաստանի վերաբերյալ ռազմավարության նախագիծ
2025-2030 թթ.

Տնօրենների խորհրդի կողմից հաստատվել է 2025 թվականի փետրվարի 26-ին

European Bank
for Reconstruction and Development

Պաշտոնական օգտագործում

ՎԶԵԲ-ը տրամադրում է փաստաթղթի բնօրինակ տեքստի թարգմանությունները միայն ընթերցողի հարմարության համար: Թեև ՎԶԵԲ-ը ողջամիտ միջոցներ է ձեռնարկել՝ ապահովելու թարգմանության իսկությունը, վերջինս չի երաշխավորում կամ հաստատում թարգմանության ճշգրտությունը: Ցանկացած նման թարգմանությանն ապավինելու արդյունքում ծագած ռիսկը կրում է միայն ընթերցողը: ՎԶԵԲ-ը, նրա աշխատակիցները կամ գործակալները որևէ հանգամանքներում ընթերցողի կամ որևէ մեկի առջև ոչ մի պատասխանատվություն չեն կրում թարգմանության անճշտության, սխալի, բացթողման, ջնջման, թերության և (կամ) թարգմանության բովանդակության որևէ փոփոխության կամ դրանցից բխող որևէ վնասի համար՝ անկախ պատճառներից: Անգլերեն տարբերակի և թարգմանված տարբերակի միջև ցանկացած անհամապատասխանության կամ հակասության առկայության դեպքում գերակշռում է անգլերեն տարբերակը:

Բովանդակություն և տերմինների բառարան

European Bank
for Reconstruction and Development

Բովանդակություն

	Ամփոփագիր	4
	Հայաստան-ՎԶԵԲ համագործակցության ամփոփ նկարագիր	5
I.	Նախորդ ռազմավարության իրականացումը (2019-2024 թթ.)	6
	Նախորդ ռազմավարության իրականացման ընթացքում ձեռք բերված հիմնական անցումային արդյունքները	6
	Իրականացման մարտահրավերները և քաղած հիմնական դասերը	8
II.	Տնտեսական համատեքստ	9
	Մակրոտնտեսական համատեքստը և հեռանկարները	9
	Անցումային շրջանի հիմնական մարտահրավերները	10
III.	Կառավարության առաջնահերթությունները և շահագրգիռ կողմերի ներգրավումը	12
IV.	Հայաստանի վերաբերյալ ռազմավարության աջնահերթությունների սահմանում	13
V.	Միջոցառումների և արդյունքների շրջանակը	14
VI.	Mapping of International Partners' Complementarity in EBRD Business Areas	16
VII.	Իրականացման ռիսկերը, շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և սոցիալական հետևանքները	17
VIII.	Դոնոր կազմակերպությունների գործընկերությունների գնահատում	18
	Հավելված - քաղաքական գնահատում	19

Հիմնական տերմինների բառարան

ԲՏՆ	Բիզնեսում տարեկան ներդրումներ	ԵԺՌ	Երկարաժամկետ ռազմավարություն
ԽՓԲ	Խորհրդատվություն փոքր բիզնեսին	ՄՓՄՁ	Միկրո, փոքր և միջին ձեռնարկություններ
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ	ԱԾ	Արտադրություն և ծառայություններ
ՀՀԲԳՀ	Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր	ՓՀ	Փոխըմբռնման հուշագիր
ԳԻԵ	Գործառնությունների իրականացման երկիր	ԱՄ ՍՆ	Ազգային մակարդակով սահմանված ներդրումներ
ՍԳՑ	Սպառողական գների ցուցիչ	ՉԿ	Չաշխատող վարկեր
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն	ՊԱՀՆ	Պաշտոնական աջակցություն զարգացման նպատակով
ԲՍ.	Բնապահպանական և սոցիալական	ՏՀՀԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ԱԵԿ	Արևելյան Եվրոպա և Կովկաս	ԳՖԿ	Գործընկեր ֆինանսական կազմակերպություն
EF	Expertise France	ՊՄԳ	Պետություն-մասնավոր գործընկերություն
ԿՀԵՀ	Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամ	ԳՀ	Գնողունակության համարժեքություն
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ	ԿՊ	Կատարողականին ներկայացվող պահանջներ
ՀԷՑ	Հայաստանի էլեկտրական ցանց	ՎԷ	Վերականգնվող էներգետիկա
ԵՄ	Եվրոպական միություն	ՌԿՄ	Ռիսկերը կիսելու մեխանիզմ
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրում	ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՖՀ	Ֆինանսական հաստատություն	ՓՄՁՄՆԾ	ՓՄՁ-ների մրցունակության և ներառման ծրագիր
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք	ՊՁ	Պետական ձեռնարկություն
ԿՏՖԾ	«Կանաչ» տնտեսության ֆինանսավորման ծրագիր	ՏԱ	Տեխնիկական աջակցություն
ԱԿՏ	Անցում դեպի կանաչ տնտեսություն	ՏՀ	Տեխնիկական համագործակցություն
ԼԿՀ	Լավ կառավարման հիմնադրամ	ԱՖԾ	Առևտրի ֆինանսավորման ծրագիր
ՋԳ	Ջերմոցային գազ	ՀՄՏ	Հեռահաղորդակցություն, մեդիա և տեխնոլոգիաներ
ԱԱԱ	Արդյունաբերություն, առևտուր և ագրոբիզնես	ՎԿ	Վենչուրային կապիտալ
ԷՄԳ	Էներգետիկայի միջազգային գործակալություն	ԿԲ	Կանայք բիզնեսում
ՄՖՀ	Միջազգային ֆինանսական հաստատություն	ԱՀԿ	Առևտրի համաշխարհային կազմակերպություն
ՄՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն	ԵԲ	Երիտասարդները բիզնեսում
ՍԴՄԱ	Սվոփերի և դերիվատիվների միջազգային ասոցիացիա		
SS	Տեղեկատվական տեխնոլոգիաներ		

Ամփոփագիր

European Bank
for Reconstruction and Development

Հայաստանը նախորդ ռազմավարության ժամանակահատվածում շարունակել է հանձնառու մնալ Բանկի հիմնադրման մասին Համաձայնագրի 1-ին հոդվածում ամրագրված քաղաքական սկզբունքներին: Հայաստանի իշխանությունները բարեփոխումների իրականացման հարցում առաջընթաց են գրանցել, մասնավորապես արդարադատության ոլորտում եւ կոռուպցիայի դեմ պայքարում: Գենդերային հավասարության բարելավումը և խտրականության բոլոր ձևերի հաղթահարումը, ըստ համապատասխան միջազգային կազմակերպությունների, կարևոր մարտահրավերներն են մնացել:

2019-2024 թթ. ընթացքում Հայաստանի տնտեսությունը ՀՆԱ-ի մեծ աճ է գրանցել՝ հաշվի առնելով համաշխարհային և տարածաշրջանային մարտահրավերները, այդ թվում COVID-19-ը, Ադրբեջանի հետ ռազմական հակամարտություն և Ուկրաինայի դեմ Ռուսաստանի պատերազմը: Տնտեսության ծանրակշիռ կատարողականին մեծապես նպաստել է կապիտալի մեծ ներհոսքը, արտահանման կայուն պահանջարկն ու շինարարության, հյուրընկալության և տեղեկատվական ու կապի ծառայությունների կայուն զարգացմանը: Չնայած այս վերջին ձեռքբերումներին, Հայաստանը դեռևս կանգնած է կառուցվածքային նշանակալի մարտահրավերների առջև՝ առաջին հերթին մասնավոր ընկերությունների, մասնավորապես փոքր բիզնեսի համար ֆինանսական միջոցների հասանելիության ոլորտներում, որոնք սրվում են ոչ ֆորմալ հատվածի մրցակցությամբ և անբավարար չափով որակավորված աշխատուժի կողմից: Արտադրողականության աճին խոչընդոտում են գենդերային անհավասարությունները և տարածաշրջանային տարբերությունները, մինչդեռ արտահանման զամբյուղում գերակշռում են ցածր հավելյալ արժեքով արտադրանքները, մասնավորապես մետաղները և հանքանյութերը: Բացի այդ, Հայաստանի փոքր եւ ծով ելք չունեցող աշխարհագրությունը, զուգորդված տրանսպորտային ենթակառուցվածքի հետ, սահմանափակում է շուկայի ինտեգրումը և ներքին կապակցումները: Չնայած սեփականաշնորհման և ծախսերն արտացոլող սակագների ներդրման ուղղությամբ դրական ջանքերին, էներգետիկ հատվածը մեծապես կախված է ներմուծվող էժան ռուսական գազից, ինչը խոչընդոտել է վերականգնվող էներգիայի հզորության եւ էներգաարդյունավետության ուղղությամբ ներդրումների ընդլայնմանը:

Այս խնդիրներն ընդգծում են շարունակական բարեփոխումների անհրաժեշտությունը: Թեպետ առաջընթաց է գրանցվել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացումը և հակակոռուպցիոն միջոցառումները, ՎԶԵԲ-ի վերջին գնահատականները Հայաստանի՝ անցումային շրջանի հատկությունների մասին վկայում են այն մասին, որ տնտեսական անցման բոլոր վեց հարթություններում երկիրը շարունակում է նկատելիորեն զիջել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) տնտեսություններին:

Հաշվի առնելով այս նկատառումները՝ երկրի ռազմավարության իրագործման հաջորդ ժամանակահատվածում Բանկը կկենտրոնանա Հայաստանի տնտեսության դիվերսիֆիկացման ամրապնդման վրա՝ աջակցելով մեծ ներուժ ունեցող ոլորտներում գործունեություն ծավալող ընկերություններին՝ միաժամանակ աշխատելով բարելավել առևտրային երթուղիները և լոգիստիկ ենթակառուցվածքները, ինչը տնտեսական արդյունավետ փոխազդեցությունների հնարավորություն կընձեռի: Ի հավելումն, Բանկը կօժանդակի մարդկային կապիտալի զարգացմանը և տնտեսության մեջ անապահով խմբերի, այդ թվում փախստականների համար ֆինանսավորման հասանելիության մեծացմանը՝ որպես առաջիկա կարևորագույն առաջնահերթություն:. Առաջիկա «Ռազմավարական և կապիտալի շրջանակին» համապատասխան՝ շեշտը կդրվի կորպորատիվ կառավարման ստանդարտների բարելավման և քաղաքականությունների վերաբերյալ երկխոսության մեջ ներգրավվելու վրա, որի նպատակը Հայաստանի գործարար միջավայրի ամրապնդումն է: Բանկը նաև ջանքեր կգործադրի դեկարբոնիզացման (ածխաթթու գազի արտանետումների նվազեցում) և էներգաարդյունավետության բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև միաժամանակ կաջակցի Հայաստանի քաղաքներին՝ լուծելու իրենց ամենահրատապ բնապահպանական խնդիրները՝ ենթակառուցվածքներում նպատակային կայուն ներդրումների և կարողությունների զարգացման միջոցով:

Ըստ այդմ, Բանկը նպատակ ունի 2025-2030 թթ. Հայաստանում հետևյալ ռազմավարական առաջնահերթություններն իրականացնել.

- *Նպաստել առավել ներառական և մրցունակ մասնավոր հատվածի զարգացմանը*
- *Արագացնել «Կանաչ տնտեսությանն անցումը» կայուն ենթակառուցվածքներին տրամադրված աջակցության միջոցով*

Հայաստան-ՎԶԵԲ համագործակցության ամփոփ նկարագիր

European Bank
for Reconstruction and Development

ՎԶԵԲ-ի ներդրումային գործունեությունը Հայաստանում *(2024 թվականի հոկտեմբերի դրությամբ)*

Պորտֆել	€594մլն	Գործող ծրագրեր	61
Բաժնեմասը	6%	Գործառնական ակտիվներ	€253մլն
Մասնաբաժինը մասնավոր հատվածում[1]	69,5%	Զուտ կուտակային ներդրումներ	€2,574մլն

ԲՏՆ և գործառնություններ



Պորտֆելի բաղադրությունը



Պորտֆելի դինամիկան



Անցումային շրջանի բացերը[2]



Թվերը՝ Հայաստանի համատեքստում

	Հայաստան	Համեմատվող երկրներ
Բնակչություն (միլիոն)[3] (2023)	2.99	Վրաստան 3.72 Լատվիա 1.88 Հյուսիսային Մակեդոնիա 1.81
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն (2017 $ ԳՀ)[3] (2023)	21,343	Վրաստան 25,072 Լատվիա 41,384 Հյուսիսային Մակեդոնիա 24327
Նոր բիզնեսների խտությունը[4] (Նոր գրանցված բիզնեսների թիվը 1,000 բնակչի հաշվով համար, 2022 թ.)	6.4	Վրաստան 8.5 Լատվիա 6.7 Հյուսիսային Մակեդոնիա 4.6
Գործազրկություն (%)[5] (2023)	13.2	Վրաստան 16.4 Լատվիա 6.5 Հյուսիսային Մակեդոնիա 13,2
Երիտասարդների գործազրկություն (%)[5] (2023)	26.1	Վրաստան 30.2 Լատվիա 12.5 Հյուսիսային Մակեդոնիա 28.6
Կանանց աշխատուժի մասնակցություն (%)[5] (2023)	68.7	Վրաստան 61,2 Լատվիա 74.4 Հյուսիսային Մակեդոնիա 54,1
Էներգատարություն TES / ՀՆԱ (MJ / 2015 $ PPP)[6] (2022)	4.3	Վրաստան 3,7 Լատվիա 3.1 Հյուսիսային Մակեդոնիա 3.5
Արտանետումների ինտենսիվությունը / ՀՆԱ (կգ CO2/2015 $) (20212[6]	0.5	Վրաստան 0.5 Լատվիա 0.2 Հյուսիսային Մակեդոնիա 0.7

1 բանկի կուտակային ներդրում. 5 տարվա ճկուն գրաֆիկով պորտֆել, 2 տես ՎԶԵԲ-ի՝ անցումային շրջանի վերաբերյալ զեկույցը 2024-2025 թթ., 3 ՀԲ համաշխարհային զարգացման ցուցանիշներ, 4 ՀԲ «Ձեռնարկատիրության վերաբերյալ հարցում» (15-64 տարեկանների շրջանում), 5 ԱՄԿ, 6 ԵՄԳ

1. Նախորդ ռազմավարության իրականացումը (2019-2024 թթ.)

1.1. Նախորդ ռազմավարության իրականացման ընթացքում ձեռք բերված հիմնական անցումային արդյունքները (1/ 2)

European Bank for Reconstruction and Development

Ռազմավարական համապատասխանեցում 2019-2024 թթ.

Կուտակային ներդրումներ



Տեխնիկական համագործակցություն և համատեղ ներդրումային ֆոնդեր



Անցումային շրջանի վրա ազդեցության արդյունավետությունը[1]



Առաջնահերթություն 1 | **Ամրապնդել մասնավոր հատվածի մրցունակությունը, բարելավել կառավարումը և աջակցել գործարարմիջավայրի բարելավմանը**

Հիմնական քանակական արդյունքներ (2019-2023)



Անցումային շրջանի հիմնական արդյունքներ

- Աջակցել է Հայաստանի արտաքին առևտրի ֆինանսավորմանը՝ տեղական գործընկեր բանկերի հետ ԱՖԾ-ի շրջանակում ավելի քան 340 միլիոն եվրոյի հատկացման միջոցով:
- Տրամադրել է հմտությունների կատարելագործման դասընթացներ ավելի քան 1000 ՓՄՁ-ների և խորհրդատվական աջակցություն ԽՓԲ շրջանակում գործող ավելի քան 270 ՓՄՁ-ներին, որոնց 92%-ը շրջանառության աճի մասին է հաղորդել:
- Ավելի քան 225 միլիոն եվրո է տրամադրվել 10 ՄՖՀ-ի, 9 գործընկեր բանկի և 1 լիզինգային ընկերության, այդ թվում՝ ՓՄՁ մրցունակության, ԿՏՖԾ-ի և ԿԲ-ի համար, ամրապնդելով ՄՖՀ-ների կարողությունները՝ ծառայելու շուկայում կանանց չօգտագործված ներուժին և բարձրացնելու իրազեկությունը կանաչ տեխնոլոգիաների ընձեռած՝ շրջակա միջավայրի և ծախսախնայողական առավելությունների վերաբերյալ:
- Աջակցել է գործարար միջավայրի բարելավմանը, ներառյալ պետական գնումների քաղաքականություններին, սնանկության օրենքին և մրցակցության մասին օրենսդրության բարեփոխումներին՝ Հայաստանի ներդրումային խորհրդին աջակցելու միջոցով:
- Աջակցել է ՀՀ Կենտրոնական բանկին մշակել եւ ընդունել Հայաստանում քրաուդֆանդինգի կարգավորման շրջանակը, որի արդյունքում լիցենզավորվել է քրաուդֆանդինգի առաջին հարթակը: Աջակցել է ԿԲ-ին Հայաստանի օրենսդրությամբ կարգավորվող և ռեպո գործարքների վրա կենտրոնացած ՍԴՄԱ գլխավոր պայմանագրերի ձևանմուշների մշակման
- գործում, շարունակել է ՀՀ ԿԲ-ի հետ երկխոսությունը դրամի շուկայի զարգացման և սվոպների և ռեպոների միջոցով Ամունդի-ԱԿԲԱ-ից դրամի իրացվելիության վերաբերյալ:
- Ներդրում է կատարել «ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամում», որը կառավարվում է «Ամբեր կապիտալ» ընկերության կողմից և
- որը հիմնադրման օրվանից ավելի քան 60 մլն եվրո է ներգրավել. երկու երրորդը՝ մասնավոր, ոչ զարգացման ֆինանսական միջոցներից:

Ինեկոբանկի հետ ստորագրել է 14.5 միլիոն եվրո արժողությամբ փաթեթ՝ Երևանում ԵՄ Թումո գիտական նորարարական կենտրոնի զարգացման համար, ֆինանսավորելով ինժեներական և կիրառական գիտությունների գերժամանակակից սարքավորումներով հագեցած բազմաբնույթ համալիրի ստեղծումը: Ֆինանսական փաթեթը զուգորդվել է տեխնիկական համագործակցության հետ՝ նպաստելու հանրակրթական դպրոցների ինտեգրումն աշխատաշուկային:

1. Անցումային ազդեցության կատարողականը ցույց է տալիս, թե որքանով է հասանելի դարձել [illegible] ասուն պորտֆելի (> 2 տարի) հիման վրա:

1. Նախորդ ռազմավարության իրականացումը (2019-2024 թթ.)

1.1. Նախորդ ռազմավարության իրականացման ընթացքում ձեռք բերված հիմնական անցումային արդյունքները (2/ 2)

European Bank for Reconstruction and Development

Առաջնահերթություն	Խթանել կայուն ենթակառուցվածքները՝ առևտրայնացման և դեպի կանաչ տնտեսություն անցման միջոցով

Հիմնական որակական արդյունքներ



Անցումային շրջանի հիմնական արդյունքներ

- ԵՄ-ի ՄՖԿ-ի հետ համաֆինանսավորել է (17.7 միլիոն ԱՄՆ դոլար ՎՁԵԲ վարկ) կոմունալ մասշտաբի առաջին արևային էներգիայի ընկերությունը (55 MW) Հայաստանում, որն, ի դեպ, առաջինն է նաև Կովկասում:
- Երևանում ավելի կանաչ հասարակական տրանսպորտի հասանելիության մեծացում՝ համաֆինանսավորման միջոցով, (20 մլն եվրո սուվերեն վարկ) սեղմված բնական գազով աշխատող 87 ավտոբուսների ձեռքբերում:
- 10.5 միլիոն եվրոյով համաֆինանսավորում է Հայաստանի Մեղրի քաղաքի մերձակայքում սահմանային անցակետի վերակառուցումը և արդիականացումը՝ բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների շարունակականությամբ աջակցելով միջսահմանային ինտեգրմանը տարածաշրջանում:
- Աջակցել է Տելեկոմ Արմենիային, որպեսզի բարելավվի հուսալի, գերարագ, օպտիկամանրաթելային ինտերնետի հասանելիությունը մոտավորապես 450,000 տնային տնտեսությունների համար՝ տրամադրելով 18.7 միլիոն եվրո ուղղակի վարկ ընկերության ֆիքսված և բջջային ցանցերի էներգաարդյունավետ վերազինման համար:
- Համաֆինանսավորման նպատակով տրամադրել է մինչև 236 մլն եվրո սուվերեն վարկ՝ Սիսիան-Քաջարան ճանապարհի 24 կմ հարավային հատվածի կառուցման համար՝ նվազեցնելով ճանապարհի հեռավորությունը (130 կմ-ից՝ 60 կմ) և տևողությունը (ներկայում 3-4 ժամից մինչև մեկ ժամ) և ավելի անվտանգ կապ ապահովելով Հայաստանի հեռավոր հարավային մարզի՝ Սյունիքի և Երևանի միջև, երկրի մնացած մասի և Վրաստանի ու Սև ծովի միջոցով՝ ԵՄ հետ:
- Տրամադրել է կարողությունների և կորպորատիվ զարգացման աջակցություն տարբեր համայնքային նախագծերին, այդ թվում Երևանի փողոցային լուսավորության, ինչպես նաև Երևանի, Կոտայքի և Գեղարքունիքի կոշտ թափոնների ուղղությամբ:
- Ֆինանսավորել է Սյունիքի մարզում մաքսային եւ լոգիստիկ կենտրոնի կառուցումը 10 միլիոն եվրո սուվերեն վարկի միջոցով՝ զուգորդելով բաժնետերերի հատուկ հիմնադրամի շրջանակում 2 միլիոն եվրո ներդրումային դրամաշնորհով, որն օգնում է բարձրացնել մաքսազերծման ծառայությունների արդյունավետությունը եւ առեւտրի ծավալների աճի պայմաններում բավարարել աճող պահանջարկը:

1. Նախորդ ռազմավարության իրականացումը (2019-2024 թթ.)

1.2. Իրականացման մարտահրավերները և քաղած հիմնական դասերը

European Bank
for Reconstruction and Development

Իրականացման համատեքստը

Նախորդ ռազմավարության ժամանակահատվածում Հայաստանի տնտեսությունը ՀՆԱ-ի մեծ աճ է գրանցել՝ հաշվի առնելով համաշխարհային և տարածաշրջանային մարտահրավերները, այդ թվում COVID-19-ը, Ադրբեջանի հետ ռազմական հակամարտությունը և Ուկրաինայի դեմ Ռուսաստանի պատերազմը: Տնտեսության ծանրակշիռ կատարողականին մեծապես նպաստել է կապիտալի մեծ ներհոսքը, արտահանման կայուն պահանջարկն ու շինարարության, հյուրընկալության և տեղեկատվական ու կապի ծառայությունների կայուն զարգացմանը: Չնայած այս այս ձեռքբերումներին, Հայաստանը դեռևս կանգնած է կառուցվածքային նշանակալի մարտահրավերների առջև՝ առաջին հերթին մասնավոր ընկերությունների, մասնավորապես փոքր բիզնեսի համար ֆինանսական միջոցների հասանելիության ոլորտներում, որոնք սրվում են ոչ ֆորմալ հատվածի մրցակցությամբ և անբավարար չափով որակավորված աշխատուժի կողմից: Արտադրողականության աճին խոչընդոտում են գենդերային անհավասարությունները և տարածաշրջանային տարբերությունները, մինչդեռ արտահանման զամբյուղում գերակշռում են ցածր հավելյալ արժեքով արտադրանքները: Բացի այդ, Հայաստանի՝ դեպի ծով ելք չունեցող աշխարհագրական դիրքը, զուգորդված տրանսպորտային ենթակառուցվածքի հետ, սահմանափակում է շուկայի ինտեգրումը և ներքին կապակցումները: Չնայած սեփականաշնորհման և ծախսերն արտացոլող սակագների ներդրման ուղղությամբ դրական ջանքերին, էներգետիկ հատվածը մեծապես կախված է ներմուծվող էժան ռուսական գազից, ինչը խոչընդոտել է վերականգնվող էներգիայի հզորության եւ էներգաարդյունավետության ուղղությամբ ներդրումների ընդլայնմանը: 1993 թվականին Հայաստանում իր աշխատանքների մեկնարկից ի վեր՝ ՎԶԵԲ-ն ավելի քան 2,5 միլիարդ եվրո է ներդրել, որից 1 միլիոնից ավելին ներդրվել է նախորդ ռազմավարության ժամանակահատվածում և ուղղվել մրցունակ մասնավոր հատվածի ստեղծմանն ու դիմակայուն ֆինանսական հատվածի ստեղծմանը՝ խթանելով կայուն ենթակառուցվածքներն ու հանրային ծառայությունները: Բացի այդ, ի պատասխան 2023 թ. սեպտեմբերից ավելի քան 115,000 փախստականների ներհոսքի՝ ՎԶԵԲ-ը Փախստականների կարիքներին արձագանքման ծրագիր է իրականացրել, որի նպատակն էր պաշտպանել և վերականգնել նրանց կենսապայմանները, ինչպես նաև նպաստել համայնքային կայունությանը:

Իրականացման մարտահրավերներ

- Դոլարիզացիան եւ կապիտալի թերզարգացած շուկաները սահմանափակում են ներդրումային հնարավորությունները:
- Տարածաշրջանային անկայունությունը, ծով ելք չունեցող աշխարհագրությունը եւ տնտեսական նեղ բազան թուլացնում են ներդրողների վստահությունը եւ սահմանափակում ՕՈՒՆ-ի ներհոսքը:
- Անորոշությունները, որոնք կապված են սուվերեն փոխառությունների ախորժակի հետ և համայնքապետարանների՝ ենթասուվերեն փոխառությունների պատրաստակամության բացակայությունը զուգակցվելով համայնքային և պետական մակարդակում իրականացման կարողության պակասի հետ, սահմանափակում են հանրային ոլորտում իրագործելի աշխատանքների առաջընթացը:
- Բարձր իրացվելիություն ունեցող բանկային հատվածը նվազեցրել է շուկայական տոկոսադրույքներով կորպորատիվ վարկավորման հնարավորությունները:

Հիմնական քաղված դասերը և հաջորդ քայլերը

- Խթանել քաղաքական երկխոսությունը Հայաստանի Կենտրոնական բանկի հետ տեղական արժույթի, ինչպես նաև փողի ու կապիտալի շուկայի զարգացման վերաբերյալ:
- Ներգրավել տեղական բիզնեսներին եւ միջազգային ներդրողներին՝ վատ զարգացած ոլորտներում ՕՈՒՆ ներգրավելու համար և կենտրոնանալով տնտեսության դիվերսիֆիկացման ու գործարար միջավայրի գրավչության բարձրացման վրա, ներառյալ Ներդրումային խորհրդի հետ շարունակական համագործակցության միջոցով:
- Շարունակել համագործակցությունը ԵՄ-ի հետ և երկխոսություն սկսել կառավարության հետ՝ պետական ենթակառուցվածքների զարգացման ու ՊՄԳ-ների նպատակով հանրային հատվածի՝ խիստ չափանիշներով ընտրված ծրագրեր իրականացնելու համար:
- Կենտրոնացեք ֆինանսական հաստատությունների արտադրանքի առաջարկի ընդլայնման վրա՝ նորարարական և ճկուն ֆինանսական արտադրանքի միջոցով, օրինակ՝ ներառելով առաջին կորուստը կամ ռիսկը և պորտֆելի փոխանակումը:

2. Տնտեսական համատեքստ

2.1. Մակրոտնտեսական համատեքստը և ռազմավարության ժամանակահատվածի հեռանկարները

Հայաստան – հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ

	2020	2021	2022	2023	2024 գն.
ՀՆԱ-ի աճ (% տարեցտարի)	-7.1	5.8	12.6	8.3	5.7
ՍԳՑ սղաճ (% միջին)	1.2	7.2	8.7	2.0	0.3
Պետական հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)	-5.4	-4.6	-2.1	-2.0	-4.8
Ընթացիկ հաշվի մնացորդ (ՀՆԱ-ի %)	-4.0	-3.5	0.3	-2.3	-4.1
Զուտ ՕՈՒՆ (ՀՆԱ-ի %) ***[հանածի նշանը ցույց է տալիս ներհոսքը]***	-0.7	-2.4	-4.7	-2.2	-0.8
Արտաքին պարտք (ՀՆԱ-ի %)	100.4	97.6	77.9	66.5	64.5
Համախառն պահուստներ (ՀՆԱ-ի %)	20.7	23.1	20.6	15.0	14.2
Ընդհանուր պետական համախառն պարտքը (ՀՆԱ-ի %)	67.4	63.4	49.2	50.7	52.6
Գործազրկության մակարդակը (%)	18.2	15.5	13.5	12.6	13.0
Անվանական (նոմինալ) ՀՆԱ ($մլրդ)	12.6	14.0	20.0	24.1	25.8

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Վիճակագրական տարեգիրք, ԱՄՀ, հոկտեմբեր, 2024 թ. .

2024 թվականին տնտեսական աճն աստիճանաբար նվազել է: Երկու տարվա կայուն աճից հետո տարեկան ՀՆԱ-ն 2024 թ-ին աճել է 5.7% -ով, այն էլ հիմնականում պայմանավորված շինարարության, առեւտրի և ֆինանսական հատվածի երկնիշ աճով ու արտադրության կայուն վերելքով: Մյուս կողմից, դրամական փոխանցումների զուտ ներհոսքը 2024 թ. առաջին կիսամյակում նվազել է 33 տոկոսով, սակայն դեռևս զգալիորեն բարձր է 2021 թ. ցուցանիշից: Կապիտալի ներհոսքի չափավորումը չի անդրադարձել ՀՀ դրամի վրա, որը, խոշոր հաշվով, մնացել է կայուն:

Դրամավարկային հետևողական քաղաքականությունը գնաճը ցածր մակարդակի վրա է պահել: Գնաճը 2023 թվականին հասավ զրոյի՝ հիմնականում սննդամթերքի գների անկման, ՀՀ դրամի համեմատաբար բարձր քաղաքականության տոկոսադրույքի և արժևորման պատճառով, չնայած ծառայությունների գները մնացել են կայուն: Գնաճի տեմպի հաջող դանդաղեցումը ՀՀ Կենտրոնական բանկին (ԿԲ) թույլ տվեց տարվա սկզբից մինչև 2024 թ. հուլիսը 150 բազիսային կետով կրճատել քաղաքականության տոկոսադրույքը մինչև 7.75 տոկոս: 2024 թ. հուլիսին տարեկան գնաճը փոքր-ինչ բարձրացավ մինչև 1.4 տոկոս, սակայն շարունակում է մնալ նպատակային մակարդակից 4.0 տոկոսից ցածր:

Հարկաբյուջետային ընդլայնումը 2024 թ.-ին ժամանակավորապես մեծացրել է բյուջեի դեֆիցիտը: Իշխանությունները հայտարարել են 2023 թվականի սեպտեմբերից ի վեր ավելի քան 115 հազար փախստականների ինտեգրմանը և ազգային պաշտպանության ամրապնդմանն ուղղվող պետական ծախսերի ավելացման մասին: Կապիտալ ծախսերը 2025 թ.-ին կաճեն՝ հաղթահարելու այդ կարևորագույն խնդիրները, փորձելով հարկաբյուջետային դեֆիցիտը հասցնել ՀՆԱ-ի 5% -ին: Այնուամենայնիվ, 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսերի նոր ծրագիրն ուղղված է հարկաբյուջետային դեֆիցիտը ցածր՝ ՀՆԱ-ի 3.0 տոկոսի չափով պահելուն: Հարկաբյուջետային նման քաղաքականությունը միտված է մեծացնելու պետական պարտքի դիմակայունությունը՝ փոխարժեքի հնարավոր ռիսկերի նկատմամբ:

ՀՆԱ-ի աճը նախատեսվում է, որ շուտով կչափավորվի: Թեև Ուկրաինայի դեմ պատերազմի հետ կապված կապիտալի ժամանակավոր ներհոսքը ցրվել է, փախստականների կարիքները բավարարելու և ազգային պաշտպանությունն ուժեղացնելու համար պետական ծախսերի ավելացումը որոշ չափով կփոխհատուցի: Հանքարդյունաբերության ոլորտում նոր ներդրումները դրական ազդեցություն կունենան արտադրանքի և արտահանման աճի վրա՝ միջնաժամկետ հեռանկարում: Սակայն աշխարհաքաղաքական անորոշությունը զգալի ռիսկեր է առաջացնում տնտեսական հեռանկարների համար: Հետեւաբար, մենք կանխատեսում ենք ՀՆԱ-ի աճը 2024 թվականին կլինի 6.2%, իսկ 2025 թ.-ին՝ 4.8 %:

2. Տնտեսական համատեքստ

2.2 Հիմնական անցումային մարտահրավերներ (I / II)

European Bank for Reconstruction and Development

Մրցունակ (4.07)

- **Փոքր եւ ծով ելք չունեցող շուկան** լրացուցիչ անբարենպաստ դիրքում է հայտնվել **աշխարհաքաղաքական մարտահրավերների** պատճառով:
- Հայաստանը **մրցակցության կանոնակարգերը համապատասխանեցնում է եվրոպական ստանդարտներին**, մասնավորապես ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) միջոցով»:
- Որպես փոքր տնտեսություն, Հայաստանի **աճի ներուժը մեծապես կախված է արտահանման հզորությունից:** Այնուամենայնիվ, **արտահանումն արտադրանքի սահմանափակ բազմազանություն է ապահովում** եւ դրանք հիմնականում բաղկացած են ցածր բարդության արտադրանքներից:
- Թե՛ **կառավարությունը, թե՛ մասնավոր հատվածը տեղյակ են** Ռուսաստանի գերազդեցության **ռիսկերին**, ուստի իշխանություններն արտահանման դիվերսիֆիկացման ռազմավարության աշխատանքներ են ձեռնարկել:
- **Նորարարությունը տնտեսական դիվերսիֆիկացման կենտրոնում** է և տեղափոխվում է դեպի ավելի բարձրարժեք արտադրանքներ, **սակայն արդյունքները գոհացուցիչ չեն**:

Արտահանման դիվերսիֆիկացում ըստ երկրների և ապրանքների (2022 թ.)



Աղբյուր՝ UNCTAD (2022)

Լավ կառավարում (6.26)

- Պետական կառավարման ոլորտում **ինստիտուցիոնալ կարողությունների բացակայությունը** խոչընդոտում է կառավարության հիմնական մարտահրավերներին դիմակայելու կարողությանը և համակարգված բարեփոխումների օրակարգի իրականացմանը:
- **Տնտեսական կառավարման** ցուցանիշներով առաջընթացը վերջին տարիներին անկայուն է եղել, իսկ տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումները բարեփոխումների համար հավելյալ մարտահրավերներ են առաջ բերել: Թեև Հայաստանը վերջին տարիներին **նվազեցրել է վարչական և կանոնակարգային բեռը**, սակայն **առաջընթացը դանդաղ է** եւ դեռևս փոխակերպող ազդեցության չի հասել:
- Կառավարության առաջընթացը **կոռուպցիայի դեմ պայքարում** արտացոլված է Թրանսփարենսի Ինթերնեշնլի «Կոռուպցիայի ընկալման ինդեքսում»՝ Հայաստանի **առաջընթացի** նկարագրության մեջ. մասնավորապես, կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ կարողությունները մեծացել են 2019 թվականին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և 2021 թվականին Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմամբ:
- Չնայած, որ պետական ձեռնարկությունների ոլորտն իր տարածաշրջանային գործընկերների համեմատությամբ **համեստ ծավալներ** ունի, սակայն կարևոր նշանակություն ունի այնպիսի կենսական ոլորտներում, ինչպիսիք են էներգիան և առողջապահությունը:
- Թեև Հայաստանի իրավական դաշտը, ընդհանուր առմամբ, աջակցում է կառավարման պատշաճ գործելակերպերին, **Կորպորատիվ կառավարման գործող կանոնագիրքը չի կիրարկվում:**

Գլոբալ կառավարման ցուցանիշներ, Հայաստանի տոկոսային վարկանիշը՝ ըստ տարիների



Աղբյուր՝

Կանաչ (5.50)

- **Էներգաարդյունավետության և կանաչ տեխնոլոգիաների ոլորտում ցածր ներդրումները հետաձգեցին Հայաստանի ջանքերը՝ նվազեցնելու հանածո վառելիքի օգտագործումը ներքին էներգիայի մատակարարման համար:** Այս միտումը, ամենայն հավանականությամբ, կխոչընդոտի տնտեսական աճն արտանետումների աճից առանձնացման ջանքերին: 2022 թվականին բնական գազը և նավթը միասին կազմել են ընդհանուր էներգամատակարարման 73.2 տոկոսը, որին հաջորդում է ատոմային էներգիան՝ 18 տոկոսով:
- **Բնական գազը Հայաստանում էներգիայի առաջնային աղբյուրն է վերջնական սպառման մեջ:** Ռուսաստանից ներկրվող գազի համեմատաբար ցածր գնի շնորհիվ այն տնային տնտեսությունների, տրանսպորտի և արդյունաբերական հզորությունների էներգիայի նախընտրելի աղբյուրն է:
- **Բնական գազը նաև էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական աղբյուրն է:** Բացի այդ, ջերմության առաջացումն ամբողջովին բխում է բնական գազից: Ատոմային էներգիան էլեկտրաէներգիայի արտադրության երկրորդ գլխավոր աղբյուրն է, չնայած Հայկական ատոմային էլեկտրակայանն արդեն տևական ժամանակ կանգնած է հնացող ենթակառուցվածքների պատճառով ստեղծված մարտահրավերների առջև:
- **Միևնույն ժամանակ, Հայաստանում ածխածնի արտանետումների ինտենսիվությունը շարունակում է հիմնականում կայուն մնալ, թեև ՎԶԵԲ գործընկերներն արդեն զգալի առաջընթաց են արձանագրել այդ հարցում՝ կրճատելով այն շուրջ 20 տոկոսով:** ԵՏՀ գործընկերները դեռևս ածխածնի ավելի բարձր ինտենսիվության տնտեսություններ ունեն, քան Հայաստանը, սակայն ՎԶԵԲ-ի միջին ցուցանիշն արդեն իսկ ցածր է և այդ բացն աստիճանաբար մեծանում է:
- **Էներգետիկայի ոլորտը Հայաստանում ՋԳ արտանետումների գլխավոր հեղինակն է, որին բաժին է ընկնում վերջին մի քանի տարիների ընթացքում ընդհանուր արտանետումների 70 տոկոսը:** Ջերմային եւ էլեկտրաէներգիայի արտադրության համար հանածո վառելիքի ինտենսիվ օգտագործումն արտանետումների աճի գլխավոր պատճառն է, որին հաջորդում է գյուղատնտեսությունը :

Էներգիայի ընդհանուր մատակարարումն ըստ առբուրների, 2022 թ.



Աղբյուր՝ Արմստատ (2022)

2. Տնտեսական համատեքստ

2.2 Հիմնական անցումային մարտահրավերներ (II / II)

European Bank
for Reconstruction and Development

Ներառական (4.96)

- ԺԴողովրդագրական միտումներն ընդգծում են **ծերացող բնակչությունը** և **միգրացիայի բարձր մակարդակը**, չնայած ավելի քան 115 հազար փախստականների ներհոսքը ժամանակավորապես փոխել է միգրացիայի դինամիկան:
- **2023 թվականի սկզբին դրությամբ աղքատությունը կազմել է 24.8 տոկոս՝ անհամաչափորեն ազդելով կանանց վրա, որոնք կազմել են աղքատների 56 տոկոսը:**[1] Հայաստանում արձանագրվում է աշխատուժի ցածր մասնակցության (56%), բարձր գործազրկության (12.5%) ցուցանիշներ և կրթությունից, զբաղվածությունից և վերապատրաստումից դուրս (NEET) երիտասարդների, մասնավորապես երիտասարդ կանանց մեծ թիվ: Լայնորեն տարածված է ոչ ֆորմալ զբաղվածությունը, հատկապես գյուղական վայրերում և գյուղատնտեսության ոլորտում:
- Աշխատաշուկան բնութագրվում է **գենդերով պայմանավորված ոլորտային նկատելի առանձնացման,** որտեղ կանայք գերակշռում են կես դրույքով և չվճարվող աշխատանքում: **Կան գենդերով պայմանավորված՝ վարձատրության չափի տարբերություններ**, որտեղ քիչ է հավանականությունը, որ կանայք բիզնես կունենան կամ կառավարման բարձր պաշտոններ կզբաղեցնեն:
- Կրթության և զբաղվածության ծրագրերում անբավարար ներդրումները սահմանափակում են Հայաստանի մարդկային կապիտալի զարգացումը: Կառավարությունը նախատեսում է մինչև 2030 թվականը կրթությանն ուղղված ծախսերն ավելացնել մինչև ՀՆԱ-ի 4%-ը՝ կենտրոնանալով մասնավոր հատվածի փորձի որակի, հասանելիությամբ և ավելի լավ ինտեգրմամբ հասցեագրել հմտությունների պակասի խնդիրը:

Աղքատության հիմնական ցուցանիշները Հայաստանում , 2022 թ

(percent)

	Extremely poor	Poor	Percent, poor population	Poverty gap*	Poverty severity*
Urban	1.0	22.1	54.0	4.1	1.1
Yerevan	0.7	18.5	22.5	3.4	0.9
Other urban	1.3	25.8	31.5	4.8	1.3
Rural	1.5	29.0	46.0	5.6	1.6
Total	1.2	24.8	100.0	4.7	1.3

Աղբյուր՝ ILCS 2022

Ինտեգրված (5.32)

- Հայաստանը շահում է **ԱՀԿ-ին, ԵԱՏՄ-ին եւ ԵՄ-ի հետ ՀԸԳՀ-ին** անդամակցությունից, որոնք նպաստավոր մուտք են առաջարկում դեպի խոշոր շուկաներ:. Միևնույն ժամանակ, աշխարհաքաղաքական իրողությունները բարդացնում են երկրի ինտեգրումը տարածաշրջանային տրանսպորտային ցանցերին ու գլոբալ առևտրին:
- Հայաստանի **ինտեգրումը տարածաշրջանային և գլոբալ և խոչընդոտում է իր ծով ելք չունեցող աշխարհագրությունը,** փակ սահմանները Թուրքիայի և Ադրբեջանի հետ ու սահմանափակ առևտրային երթուղիները՝ **Վրաստանը դարձնելով միջազգային շուկաներ մուտք գործելու համար կարևոր տարանցիկ կետ:**
- Չնայած Հայաստանն ունի համեմատաբար խիտ ճանապարհային և երկաթուղային ցանցեր, **տրանսպորտային ենթակառուցվածքների ընդհանուր որակը ցածր է,** իսկ ճանապարհային և երկաթուղային ծառայությունները կանգնած են անարդյունավետության և լոգիստիկ մարտահրավերների առջև:
- Հայաստանի երկաթուղային ցանցի անկումը **կախվածության սլաքը տեղափոխել է ճանապարհային տրանսպորտի ուղղությամբ՝ ինչպես ապրանքների, այնպես էլ ուղևորների համար,** սակայն ծերացող ենթակառուցվածքները և ճանապարհատրանսպորտային պատահարների ավելացումն անվտանգության լուրջ մարտահրավերներ են ներկայացնում՝ հարկադրելով ջանքեր գործադրել պայմանների և ստանդարտների բարելավման ուղղությամբ:
- Խաղաղության խաչմերուկի շրջանակում Հայաստանը ներդրումներ է կատարում՝ դիրքավորվելու որպես հնարավոր տարանցիկ երկիր և իր տարածաշրջանային կապի ուժեղացման համար, այդ թվում Գյումրիում լոգիստիկ կենտրոն կառուցելու ծրագրերի միջոցով:

Բեռների (ձախ) և ուղևորների (աջ) փոխադրումների բաշխում ճանապարհային և երկաթուղային տրանսպորտի միջև (միլիոն տոննա կմ և միլիոն ուղևոր կմ)



Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (2023 թ.)

Դիմակայուն (5.83)

- **Հայաստանի ֆինանսական շուկաները շարունակում են անբավարար չափով զարգացած մնալ՝ չնայած մակրոտնտեսական կայուն միջավայրին, շուկայի զարգացման համար բարենպաստ իրավական պայմաններին և ներդրողների աճող բազային:** Այսուհանդերձ, հիմնական մարտահրավերները ներառում են ցածր մակարդակի խորություն, իրացվելիություն և դիվերսիֆիկացում շուկայական բոլոր հատվածներում:
- **Հայաստանի ֆինանսական համակարգը, սակայն, վերջին տասնամյակների ընթացքում անշեղորեն աճում է,** որտեղ ակտիվների ծավալը 2023 թվականին հասել է ՀՆԱ-ի 115 տոկոսին: Այնտեղ գերիշխող դիրք է զբաղեցնում բանկային հատվածը, որի ակտիվները կազմել են ՀՆԱ-ի 97 տոկոսը և ընդհանուր ֆինանսական համակարգի ակտիվների 84 տոկոսը:
- **Հայաստանը ներքին էներգիայի մատակարարման և սպառման համար մեծապես ապավինում է Ռուսաստանից ներկրվող, էժան բնական գազին:** Ծով ելք չունենալը և մեկ մատակարարից կախվածությունը Հայաստանի էներգետիկ անվտանգությունն աշխարհաքաղաքական վտանգների է ենթարկում:
- **2021 թ. հունվարին Հայաստանի կառավարությունը հավանություն է տվել էներգետիկայի ոլորտի զարգացման ռազմավարական նոր ծրագրին, որտեղ նախանշվում են մինչև 2040 թ. էներգետիկ անվտանգության ամրապնդման նպատակները:** Այս նոր ռազմավարության մեջ ամրագրված է վերականգնվող էներգիայի առավելագույնի հասցնելը, Վրաստանի և Իրանի հետ էլեկտրաէներգիայի փոխանցման կապերի խթանումը և ներքին էլեկտրաէներգիայի շուկայի աստիճանական ազատականացումը, ինչպես նաև 2026 թվականից հետո Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) արդիականացումը, ինչը զգալի ներդրումներ է պահանջում: 2024 թ փետրվարին Հայաստանն ընդունեց ջերմոցային գազերի ցածր արտանետումների զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը, որով վերահաստատեց մինչև 2050 թ ջերմոցային գազերի արտանետումները մեկ շնչի հաշվով մինչև 2,07 տ CO2-ի համարժեք նվազեցնելու իր հավակնությունը:

ՎԶԵԲ ֆինանսական շուկայի զարգացման ինդեքս (2023 թ.)



Աղբյուր՝ ՎԶԵԲ FMDI (2023 թ.)

1. Աղքատության մակարդակը սահմանվում է որպես աղքատության յուրաքանչյուր շնչի գործակից՝ օրական $2.15 (2017 PPP) (բնակչության տոկոսը) (Համաշխարհային բանկ)

3. Կառավարության առաջնահերթությունները և շահագրգիռ կողմերի ներգրավումը

European Bank
for Reconstruction and Development

3.1. Պետական բարեփոխումների առաջնահերթությունները

Հայաստանի ազգային առաջնահերթությունները մանրամասն շարադրված են **2021-2026 թվականների կառավարության ծրագրում**, որը նախանշում է համապարփակ մոտեցում Հայաստանի ազգային մարտահրավերներին և զարգացման նպատակների խթանմանը՝ հետևյալ հիմնական ոլորտներում նպատակային ներդրումներ և բարեփոխումներ կատարելու միջոցով:

1. **Անվտանգություն և արտաքին քաղաքականություն** Տարածաշրջանում արդար և կայուն խաղաղության հասնելը, ազգային անվտանգության ապահովումը և պաշտպանական կարողությունների ամրապնդումը, տարածաշրջանային դինամիկայի կայունացման և հավասարակշռված, ակտիվ արտաքին քաղաքականության վարումը՝ Հայաստանի միջազգային դիրքն ամրապնդման և տարածաշրջանային համագործակցության խթանման նպատակով:
2. **Տնտեսական զարգացում** Տնտեսական աճ դիվերսիֆիկացիայի և նորարարության միջոցով՝ նպատակ ունենալով ստեղծել մրցակցային բիզնես միջավայր, խթանել արտահանումը և օտարերկրյա ներդրումներ ներգրավել՝ հատուկ ուշադրություն դարձնելով փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ) աջակցությանը:
3. **Ենթակառուցվածքների զարգացում** Նախատեսվում են զգալի ներդրումներ տրանսպորտի, էներգետիկայի և թվային ենթակառուցվածքներում՝ ներքին փոխկապակցումների բարելավման և Հայաստանի դերը որպես տարածաշրջանային տարանցիկ հանգույց՝ բարձրացնելու համար:
4. **Մարդկային կապիտալի զարգացում**: Կարևոր ներդրումներ կրթության, առողջապահության և սոցիալական ծառայությունների ոլորտներում՝ քաղաքացիների կյանքի որակը բարելավելու համար: Սա ներառում է կրթական համակարգի բարեփոխումներ, առողջապահական ծառայությունների հասանելիության բարելավում և սոցիալական պաշտպանության ավելի ուժեղ մեխանիզմներ:
5. **Իրավունք և արդարադատություն** Ծրագիրը ներառում է օրենքի ուժի ամրապնդման, դատական անկախության ապահովման և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումներ՝ շեշտադրելով բոլոր քաղաքացիների համար արդարադատության և հավասար իրավունքների ապահովումը:
6. **Ինստիտուցիոնալ զարգացում** Պետական հաստատությունների արդյունավետության և թափանցիկության բարձրացում, այդ թվում պետական կառավարման բարեփոխումների, ապակենտրոնացման և կառավարման բարելավման ժամանակակից տեխնոլոգիաների որդեգրման միջոցով:

3.2 ՎԶԵԲ բարեփոխումների ոլորտները հիմնականում համաձայնեցված են իշխանությունների հետ

- Ընդլայնել տնտեսության դիվերսիֆիկացիան եւ փոխկապակցումը՝ աջակցելով տեղական ՓՄՁ-ներին, դիվերսիֆիկացնելով արտահանման զամբյուղը և դիրքավորելով Հայաստանը միջազգային խոշոր միջանցքներում:
- Խթանել կապիտալի շուկայի զարգացումը, այդ թվում այնպիսի նախաձեռնությունների միջոցով, ինչպիսին է ԵՄ-ՎԶԵԲ կապիտալի շուկայի աջակցության ծրագիրը:
- Բարձրացնել վերականգնվող էներգիայի հզորությունը, բարելավել էներգիայի և ռեսուրսների արդյունավետությունը, ինչպես նաև ներդրումներ կատարել ցանցային կլանման կարողությունների և էներգախնայողության լուծումների ուղղությամբ:
- Հասցեագրել փախստականների կարիքները նպատակային ֆինանսական և տեխնիկական աջակցություն տրամադրելով, որը կօգնի վերականգնել կենսապայմանները և ամրապնդել համայնքի դիմակայունությունը:

3.3 Քաղաքացիական հասարակության հիմնական ուղերձները ՎԶԵԲ-ին

- ՔՀԿ-ներն ընդգծել են Հայաստանի համար ներառական, կանաչ և կայուն զարգացման կարևորությունը և կոչ արել ազգային և միջազգային ներդրումներով խթանել տնտեսությունը՝ հզորացնելով պետական և մասնավոր հատվածի կարողությունները, բարելավելով ֆինանսական մ իջոցների հասանելիությունը, խթանելով թափանցիկությունը, տնտեսության ներառականությունը, խրախուսելով թվայնացմանը և աջակցելով ենթակառուցվածքային նախաձեռնություններին:
- ՔՀԿ-ները Բանկին խրախուսեցին կանաչ դարձնել տնտեսությունը եւ կայուն զարգացում ապահովել (i) վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումների, (II) հանրային մասնակցության և վերահսկողության բարելավման եւ (III) կանաչ նախաձեռնությունների թափանցիկության խթանման միջոցով:
- ՔՀԿ-ները կոչ են արել բարձրացնել քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը, բարելավել տեղեկատվության հասանելիությունը և մեծացնել քաղաքական մասնակցությունը:
- ՔՀԿ-ները նաև խորհուրդ են տվել կարողությունների զարգացման մասով աջակցություն տրամադրել քաղաքացիական հասարակությանը՝ նպատակ ունենալով ամրապնդել ազգային հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Նրանք կոչ են արել քաղաքացիական հասարակության դերակատարներին ավելի մեծ պաշտպանություն տրամադրել ընդդեմ ճնշումների, վրեժխնդրության և հաշվեհարդարի բոլոր ձևերի:

4. Հայաստանի վերաբերյալ ռազմավարության առաջնահերթությունների սահմանում

European Bank
for Reconstruction and Development

Ի՞նչ է պետք փոխել (Երկրի ախտորոշում)	Կարո՞ղ է այն փոխվել: (Քաղաքական տնտեսություն)	Ի՞նչ կարող է անել բանկը: (Ինստիտուցիոնալ հնարավորություններ)	Ռազմավարական առաջնահերթություններ (2025-2030 թթ.)	Ինչենք ուզում ենք տեսնել 2030 թ.-ին
• Առևտրային երթուղիների զգալի սահմանափակումներ և սահմանափակ կապ՝ պայմանավորված աշխարհաքաղաքական մարտահրավերներով և սահմանային սահմանափակումներով արևելքից և արևմուտքից, ինչպես նաև դեպի ծով ելք չունեցող աշխարհագրությունը սահմանափակելով մուտքը շուկաներ, արտահանումը և առևտրի դիվերսիֆիկացումը: • Ցածր հավելյալ արժեքով արտադրանքը, հատկապես նվազագույն վերամշակված խտանյութը և հանքաքարը, արտահանման կեսն են կազմում: • Ֆինանսական շուկաները շարունակում են թերզարգացած մնալ: • Մարդկային կապիտալը բավարար չափով չի օգտագործվում, աշխատաշուկայի մարտահրավերները կապված են կրթության որակի և հասանելիության հետ: • Կանայք բախվում են բարձր գործազրկության և աշխատուժի ցածր մասնակցության խնդիրների, գենդերով պայմանավորված վարձատրության, ղեկավար պաշտոններում անբավարար ներկայացվածության, կանանց նկատմամբ բռնության հետ կապված մարտահրավերների: • Պետական կառավարման համակարգում ինստիտուցիոնալ կարողությունների բացակայություն	• Կառավարության ուշադրության մեծացում առևտրի դիվերսիֆիկացման և ներդրողներին ներգրավելու ջանքերի ուղղությամբ՝ ժամանակակից ձուլարանների կառուցման և արժեշղթայում այլ կարողությունների զարգացման նպատակով: • Խաղաղության շարունակվող գործընթացը կարող է հանգեցնել սահմանների բացման և Միջին միջանցքում ավելի մեծ ներգրավվածության: • Առաջընթաց է գրանցվել (հետ-) առևտրային ենթակառուցվածքում, ներառյալ ռեպո առևտրային հարթակի ներդրման միջոցով: • Կառավարությունը պարտավորվել է մինչև 2030 թվականը բարձրացնել կրթության ծախսերը՝ հասցնելով ՀՆԱ-ի 4%-ին և իրականացնել աշխատաշուկայի մարտահրավերներին դիմակայելու միջոցառումներ: • Դրական քայլեր են կատարվել գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ՝ վերջերս ընդունելով սեռական ոտնձգությունների վերաբերյալ նոր օրենսդրությունը և գենդերային հավասարության ռազմավարությունը: • Հանրային ծառայությունների բարելավման նկատմամբ հետաքրքրության և հանձնառության մեծացում, այդ թվում ԵՄ աջակցության և պետական կառավարման բարեփոխումների նոր ռազմավարության միջոցով:	• ՎԶԵԲ-ը կարող է տրանսպորտային և լոգիստիկ ենթակառուցվածքների ուղղությամբ աջակցություն տրամադրել՝ առևտրի և կապի բարելավման համար՝ • Փորձագիտական հմտություններ՝ ֆինանսական պրոդուկտների և կապիտալի/փողի շուկաների ընդլայնման ոլորտներում: • Ֆինանսական և խորհրդատվական աջակցություն քիչ զարգացած հատվածներին, օրինակ՝ Կանայք բիզնեսում (ԿԲ): • ՎԶԵԲ-ը կարող է խթանել հմտությունների կատարելագործման լուծումներ և ավելի մեծ ֆինանսական ներառում: • Տնտեսության կառավարման, առևտրայնացման և կորպորատիվ կառավարման աջակցության մեծ փորձ: • Կենտրոնացված և գործառնականորեն փոխկապակցված քաղաքականությամբ ներգրավվածություն՝ աջակցելու ինստիտուցիոնալ և գործարար միջավայրի բարեփոխումներին՝ ՕՈՒՆ ներգրավելու միտմամբ:	**Աջակցել առավել ներառական և մրցունակ մասնավոր հատվածի զարգացմանը**	• Դիվերսիֆիկացված և ընդլայնված ֆինանսական միջնորդություն • Բարելավված գործարար միջավայր և ձեռնարկությունների արդյունավետության բարձրացում • Տնտեսական կապերի և դիվերսիֆիկացման բարելավում
• Կախվածություն ներմուծվող բնական գազից՝ որպես էներգամատակարարման հիմնական աղբյուր և ապավինում հնացած Հայկական ատոմային էլեկտրակայանից (ՀԱԷԿ), որի քայքայված ենթակառուցվածքները հաճախակի էներգիայի կորստի պատճառ են դառնում: • Էներգաարդյունավետ տրանսպորտ և բնակավայրեր • Սահմանափակ ֆինանսավորումը, էներգիայի առևտրի երթուղիների և ենթակառուցվածքների դանդաղ զարգացումը խոչընդոտում են էներգիայի վերականգնվող աղբյուրների ոլորտում առաջընթացը: • Սակագների բարեփոխման դանդաղ տեմպ և էլեկտրաէներգիայի պասիվ առևտրային շուկա	• ԱՄՆ (NDC) իրականացման հավակնոտ ծրագիր՝ մինչև 2030 թվականը հասնելու ՋԳ արտանետումների 40 տոկոս կրճատման՝ 1990-ականների մակարդակների համեմատ: • Վերականգնվող էներգիայի հզորությունների առավելագույնի հասցնելը, ՀԱԷԿ-ի շահագործման արդիականացումը և երկարաձգումը 2026 թ.-ից հետո, ինչպես նաև նոր ատոմակայանի կառուցումը, որը կփոխարինի ՀԱԷԿ-ին՝ որպես մինչև 2040 թվականը էներգետիկ անվտանգության ամրապնդմանն ուղղված էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրի հիմնական առաջնահերթություններ: • Էներգախնայողության և վերականգնվող էներգիայի 2022-2030 թթ. ծրագրում նշված՝ էլեկտրաէներգիայի արտադրության մեջ արևային էներգիայի մասնակցությունն ավելացնելու պարտավորություն:	• Կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայությանը, դեկարբոնացմանը և ածխածնի ցածր արտանետումներով լուծումներին աջակցության հուսալի փորձ: • ՎԶԵԲ-ը կարող է նպաստել կանաչ ներդրումներին և ամրապնդել էներգիայի ու ռեսուրսների արդյունավետությունը: • Կայուն ենթակառուցվածքների զարգացման նշանակալի փորձ՝ GET շրջանակի միջոցով (օրինակ՝ «Կանաչ քաղաքներ»):	**Արագացնել «Կանաչ տնտեսությանն անցումը» կայուն ենթակառուցվածքներին տրամադրված աջակցության միջոցով**	• Էներգախնայողության և դեկարբոնացման մակարդակի բարձրացում • Համայնքային ենթակառուցվածքների բարելավված որակ, դիմակայունություն և ներառականություն • Ամրապնդված էներգետիկ անվտանգություն՝ դիմակայուն և բազմազանեցված էներգիայի համակցությամբ:

5. Միջոցառումների և արդյունքների շրջանակը(1/ 2)

European Bank
for Reconstruction and Development

Առաջնահերթություն 1. Նպաստել առավել ներառական և մրցունակ մասնավոր հատվածի զարգացմանը

Առանցքային նպատակներ	Միջոցառումներ	Հետևելու համար կիրառվող ցուցանիշներ
Դիվերսիֆիկացված և ընդլայնված ֆինանսական միջնորդություն	• Ամրապնդել ՓՄՁ-ների միջնորդավորված ֆինանսավորումը՝ ՄԳՀ-ներին հատուկ վարկային գծերի և այլ գործիքների տրամադրման միջոցով, որտեղ առանցքում կանաչ անցումն է (ԿՏՖԾ/GEFF), տնտեսության ներառականությունը (ԿԲ/WIB) և առեւտրի մրցունակությունը (ՓՄՁ ՄՆ/SMECI): Աջակցել ՄՖՀ-ներին՝ ամրապնդելու կորպորատիվ կառավարման հմտությունները, նոր պրոդուկտների ներդրման հնարավորությունները, ներառյալ Երիտասարդները բիզնեսում (ԵԲ), թվային փոխակերպումը և ագրովարկային գծերը: • Գործարկել դիվերսիֆիկացված ֆինանսական գործիքներ, ներառյալ ռիսկերը կիսելու մեխանիզմ (ՌԿՄ/RSF) և պորտֆելի ռիսկերի փոխանակումը (ՊՌՓ/PRS), առևտրի ֆինանսավորումը և կապիտալի շուկայի գործիքները (օրինակ՝ տարբեր պարտատոմսեր): • Գործընկերային հարաբերություն ստեղծել ՄՖՀ-ների հետ՝ փախստականներին և ընդունող համայնքներին նպատակային վարկային գծերի տրամադրմամբ աջակցելու համար, նպատակ ունենալով կենսապահովման միջոցներ ստեղծել, բնակարանային կարիքները լուծել, նպաստել ձեռներեցությանը և զարգացնել ՄՓՄՁ վարելու կարողությունները՝ պահանջարկի և աշխատուժի մատակարարման պահանջի մեծացման հաղթահարման նպատակով: • Հնարավորություն գտնել ֆինանսական և կապիտալի շուկաների հետագա զարգացմանն աջակցելու համար, այդ թվում Կապիտալի շուկաների աջակցության ծրագրի միջոցով • Խթանել գենդերային առումով պատասխանատու քաղաքականությունները և գործելակերպերը ֆինանսական ոլորտում, այդ թվում՝ սեռի հիմքով տարանջատված ՓՄՁ տվյալների հավաքագրման միջոցով (WE- Finance Code)	• Ծավալ / ՄՓՄՁ-ների թիվը/ Կանայք բիզնեսում/ Երիտասարդները բիզնեսում/ Փախստականներ/ ՓՄՁ ՄՆ/ տրամադրված ԿՏՖՄ/GEFF ենթավարկեր • ՌԿՄ/ՊՌՄ գործարքների ծավալը / քանակը • Վերջնական շահառուների տոկոսը, ովքեր հաղորդել են արտադրողականության կամ շրջանառության բարելավման մասին՝ ՄՖՀ-ների կողմից աջակցության արդյունքում:
Ձեռնարկությունների ամրապնդված կատարողական և բարելավված գործարար միջավայր	• ՓՄՁ-ներին ՓԲԽ-ի միջոցով տրամադրել ֆինանսավորում և խորհրդատվական ծառայություններ, ներառյալ կորպորատիվ կառավարման, թվային փոխակերպման վերաբերյալ և ԿԲ/WiB ներքո: Մեկնարկել Երիտասարդները բիզնեսում թեմայով խորհրդատվական ծառայություններ • Ամրապնդել մարդկային կապիտալի զարգացումը՝ աջակցելով շուկային համապատասխան հմտությունների և աշխատանքային հնարավորությունների ստեղծմանը աշխատաշուկայի բոլոր հատվածների, ներառյալ կանանց, երիտասարդների, փախստականների, հաշմանդամություն ունեցող անձանց և տարեց բնակչության համար: • Շարունակել օժանդակել ներդրումային միջավայրին, ներառյալ Ներդրումային խորհրդի հետ համագործակցության միջոցով: • Ամրապնդել պետական հատվածի կարողությունները, այդ թվում պետական գնումներին, ծրագրերի իրականացմանը և թվային փոխակերպմանն աջակցության միջոցով՝ գործարար միջավայրի բարելավման և մասնավոր հատվածի զարգացման տեմպի արագացման նպատակով: • Շարունակել ուժեղացնել վաղ փուլում գտնվող տեխնոլոգիական էկոհամակարգը, այդ թվում Star Venture ծրագրի և վենչուրային կապիտալի էկոհամակարգին աջակցության միջոցով:	• ՎՁԵԲ ուղղակի ֆինանսավորումից կամ խորհրդատվական ծառայություններից օգտվող հաճախորդների թիվը • Հաճախորդների տոկոսը, ովքեր հաղորդել են ֆինանսավորումից, խորհրդատվական ծառայությունից կամ վերապատրաստմանն աջակցությունից հետո արտադրողականության կամ շրջանառության բարելավման մասին
Տնտեսական կապերի և դիվերսիֆիկացման բարելավում	• Շարունակել խթանել տնտեսության բազմազանեցմանը՝ նոր ապրանքների և ծառայությունների ներդրմամբ, արտահանման ուղղվածություն ունեցող ընկերություններին և գործառնական ու բնապահպանական բարձր ստանդարտների խթանմանը, ներառյալ զբոսաշրջությանը, SS ծառայություններին և այլ մեծ ներուժ ունեցող ոլորտներին աջակցելու միջոցով: • Սատարել առևտրի բազմազանեցմանը՝ ՓՄՁ-ներին աջակցության և իշխանությունների հետ համագործակցության միջոցով: • Աջակցել տարածաշրջանային արժեքային շղթաների ընդլայնմանն ու ինտեգրմանը, ներառյալ լոգիստիկ օբյեկտներին ֆինանսավորման տրամադրման միջոցով: • Ամրապնդել կապը տրանսպորտի ուժեղացման միջոցով և պետական ու մասնավոր նախագծերի, հեռահաղորդակցության ցանցերի և սահմանային ենթակառուցվածքների օգնությամբ, ինչպես նաև աջակցելով միջազգային միջանցքներին, ինչպիսիք են Խաղաղության խաչմերուկը և Միջին միջանցքը:	• Հաճախորդների թիվը, ովքեր հաղորդել են արտահանման վաճառքների ծավալի մեծացման մասին • Գործարքների քանակը/ծավալը, որոնք բարելավում կամ ավելացնում են ազգային/միջսահմանային ենթակառուցվածքները:

5. Միջոցառումների և արդյունքների շրջանակը(2/ 2)

European Bank
for Reconstruction and Development

Առաջնահերթություն 2. Արագացնել «Կանաչ տնտեսությանն անցումը» ներառական և կայուն ենթակառուցվածքներին տրամադրված աջակցության միջոցով

Առանցքային նպատակներ	Միջոցառումներ	Հետևելու համար կիրառվող ցուցանիշներ
Էներգաարդյունավետության մեծացում և ածխածնազերծում	• Ուսումնասիրել դեկանբոնիզացման և էներգաարդյունավետության խթանման հնարավորությունները տեխնիկական և ֆինանսական աջակցության միջոցով՝ սակագնային բարեփոխումների իրականացման, ածխածնի ցածր արտանետումներով լուծումների մշակման և Հայաստանի՝ ազգային մակարդակով սահմանված ներդրումների իրականացմանն աջակցությանման նպատակներով: • Ուղղակի և միջնորդավորված ֆինանսավորման ու խորհրդատվական ծառայությունների միջոցով նպաստել էներգաարդյունավետությանը՝ կորպորատիվ և բնակելի հատվածներում: • Աջակցել ֆինանսական հատվածի դերակատարներին՝ կանաչ անցման պլանավորման մոտեցում իրականացնելու հարցում, ֆինանսավորումը համապատասխանեցնել ԱՍՆ-ներին /Փարիզի համաձայնագրի և «Կյանքն անցումային փուլում» (LTS) նպատակներին և ներառել կլիմայի փոփոխության ռիսկերի կառավարման չափորոշիչները: • Աջակցել կորպորատիվ հատվածի դեկանբոնիզացմանը, ներառյալ կանաչ ֆինանսավորմանն աջակցությամբ և կլիմայի կորպորատիվ կառավարման որդեգրման խթանմամբ՝ միջազգային լավագույն փորձին համահունչ:	• CO2e արտանետումների կրճատում (հազար տոննա/տարեկան) • ՄՖՀ-ների կամ կորպորատիվ հաճախորդների թիվը, որոնք ՎՁԵԲ օժանդակությամբ բարելավում են կլիմայական և բնապահպանական գործելակերպերը: • Ածխածնի ցածր արտանետումներով նոր, վերանորոգված կամ ընդլայնված ակտիվների թիվը:
Համայնքային ենթակառուցվածքների բարելավված որակ, դիմակայունություն և ներառականություն	• Շարունակել ֆինանսավորել կայուն և ներառական համայնքային ու բնապահպանական ենթակառուցվածքները և դրա հետ կապված ծառայությունները, ներառյալ կոշտ թափոնների, ջրային ենթակառուցվածքների, տրանսպորտի, փողոցային լուսավորության արդիականացման, էներգաարդյունավետ հանրային շենքերի առնչությամբ: • Աջակցել ենթակառուցվածքների և համայնքային ծառայությունների կարողությունների հզորացմանն ու թվայնացմանը: • Աջակցել «Կանաչ քաղաքներ» ծրագրի աշխարհագրական և ոլորտային ընդլայնմանն ու ընթացիկ ծրագրերի շարունակական իրականացմանը: • Հնարավորություն գտնել՝ աջակցելու աղետներին պատրաստվածությանը, կլիմայի փոփոխություններին հարմարվողականությանն ու մեղմմանը:	• Համայնքային ենթակառուցվածքների հզորությունը, ապրանքները և ծառայությունները բարելավող կամ ավելացնող գործարքների թիվը: • Բարելավված համայնքային ծառայություններից օգտվող անձանց թիվը
Ամրապնդված էներգետիկ անվտանգություն՝ դիմակայուն և բազմազանեցված էներգիայի համակցությամբ	• Աջակցել բաշխիչ և փոխանցող ցանցերի կատարելագործմանը, ներառյալ սահմանային փոխկապակցումները և կլիմայի փոփոխությանը դիմակայունության բարելավումը: • Ուսումնասիրել էներգիայի պահուստավորման լուծումների ներդրման հնարավորությունները, այդ թվում որպես կլիմայի հետ կախված ֆիզիկական ռիսկերին հարմարվողականության տարբերակ: • Ընդլայնել արևային/քամու էներգիայի հզորությունների աջակցությունը և փորձել հետագայում բազմազանեցնել էներգիայի արտադրության աղբյուրներ: • Ուսումնասիրել ատոմակայանի անվտանգ շահագործմանը և հետագա ապամոնտաժմանն աջակցության հնարավորությունները: • Խթանել կլիմայի փոփոխությանն ուղղված ներառական գործողությունները, այդ թվում կանանց մասնակցության ավելացումն էներգետիկայի ոլորտում և որոշումների կայացման գործընթացներում:	• Վերականգնվող էներգիայի հզորության տեղադրում (MW) • Արտադրված վերականգնվող էլեկտրաէներգիան (ՄՎտժ/տարեկան)

Կանաչ Ինտեգրված

6. ՎԶԵԲ-ի գործունեության ոլորտներում միջազգային գործընկերների փոխլրացման քարտեզագրում

European Bank for Reconstruction and Development

ՎԶԵԲ գործունեության ոլորտներ

		Հատվածներ									Փոխկապակցված թեմաներ			
		Արդյունաբերություն, առևտուր և ագրոբիզնես					Կայուն ենթակառուցվածք		ՖՀ		Ռազմավարական նախաձեռնություններ			
Ինդիկատիվ միջին տարեկան ներդրումները / դրամաշնորհները (€m, 2019-2024 թթ.)		Ագրոբիզնես	Արտադրություն և ծառայություններ	Անշարժ գույք և զբոսաշրջություն	ՀՄՏ	Բնական պաշարներ	Էներգետիկա	Ենթակառուցվածք	Բանկային ոլորտ	Ոչ բանկային ՖՀ-եր	Կանաչ տնտեսություն	Ներառականություն և գենդերային հավասարություն	Տեղական արժույթ և կապիտալի շուկաներ	Փոքր բիզնես
ԱԶԲ	125						€P	€			€P	€P	€P	
ԵՆԲ	94	€							€					€
ՀԲ	61						€	€	€		€			€
ՄՖԿ	60						€P				€	€		
KFW	56				€		€		€					€
ԵՄ	52						€	€	€		€			€
ՖԶԳ, այդ թվում Պրոպար կոպարկոն և EF	46							€			€P	€P		
							€	€P	€	€	€P	€	€	€
ՎԶԵԲ	**172**													

€ Զգալի ներդրումների ոլորտ

P Զգալի քաղաքական ներգրավվածության ոլորտ

Կենտրոնանում է հիմնականում մասնավոր հատվածի վրա

Կենտրոնանում է հիմնականում պետական ոլորտի վրա

Ծանոթություն. Ծանոթություն. ՄՖԿ-ների քարտեզագրումը՝ հիմնված հանրայնորեն մատչելի տվյալների վրա: ՄՖԿ-ների զգալի ներդրումները սահմանված են որպես ծրագրեր, որոնք գերազանցում են տարեկան ներդրումների 5%-ը և ստորագրված են 2019 թվականից մինչև 2023 թվականի ավարտը:

Համագործակցության հնարավոր ոլորտներ

Կանաչ

- Կանաչ նախագծերի շուրջ համագործակցության հնարավորությունների որոնում, ներառյալ ՄՖԿ-ի, ՆԵԲ-ի և ԵՄ-ի հետ:

Մրցունակ

- Նպաստել ԵՄ-ի, ՄԹ ԳՖՖ-ի և այլոց հետ գործընկերությանը՝ հասցեագրելու ֆինանսների հասանելիությունը, աջակցելու պետական-մասնավոր երկխոսությանը և ամրապնդելու մասնավոր հատվածի զարգացմանը:

Ինտեգրված

- Զգտել համագործակցել դոնորների եւ IFI-ների հետ `ուղղված արտաքին խոցելիության բարձրացմանը

Ներառական

- Շարունակել համագործակցել գործընկերների հետ `լրացուցիչ պատասխաններ մշակելու փախստականների ներհոսքի ավելացման համար

Լավ կառավարվող

- Իրականացնել քաղաքականության երկխոսություն եւ TA- ն `աջակցելու բիզնեսի կլիմայի բարելավմանը գործընկերների հետ սերտ համակարգման մեջ

7. Իրականացման ռիսկեր, բնապահպանական և սոցիալական ազդեցության հետևանքները

European Bank
for Reconstruction and Development

Ռազմավարության իրականացման ռիսկերը	Հավանականություն	Ազդեցություն	Բնապահպանական և սոցիալական հետևանքներ
• **Տարածաշրջանային անվտանգության իրավիճակի վատթարացումը** կարող է խաթարել ներդրողների վստահությունը և սահմանափակել բիզնեսի հնարավորությունները	Միջին	Բարձր	• **ԲՍ ազդեցությունների գնահատում և կառավարում՝ ոլորտային եւ ծրագրային մակարդակներում** Ապահովել, որ ԲՍ գնահատման միջոցով չափվեն և մեղմացվեն ծրագրերի ուղղակի, անուղղակի և կուտակային ազդեցությունները՝ PR1-ին համահունչ: Կպահանջվի հատուկ ուշադրություն դարձնել վերականգնվող էներգիայի և էներգաբաշխիչ ցանցերում ներդրումների տեղանքի / երթուղու ընտրությանը: ՏՀ ֆինանսավորումը կարող է պահանջվել հաճախորդների կողմից Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի (ԲՍԳԾ/ESAP) իրականացմանն աջակցելու նպատակով, մասնավորապես հանրային ոլորտում: • **Աշխատուժ և աշխատանքային պայմաններ**. Ապահովել հաճախորդների ՄՌ քաղաքականությունների և աշխատանքային գործելակերպերի համապատասխանեցումը ԿԶԵԲ ԲՍՔ ԿՊ2-ի (ESP PR2) պահանջներին՝ կենտրոնանալով արդար վերաբերմունքի, խտրականության, ոտնձգությունների բացառման և ծրագրի բոլոր աշխատողների հավասար հնարավորությունների վրա և խրախուսել աշխատող-ղեկավարություն առողջ հարաբերությունների բարելավումը՝ հիմնված սոցիալական երկխոսության վրա: Աջակցություն հաճախորդներին՝ մատակարարման շղթայում վերականգնվող էներգիայի ներդրումների հետ կապված ռիսկերի կառավարման հարցում օգնելու նպատակով: ՏՀ ֆինանսավորումը կարող է պահանջվել հաճախորդներին հիմնական աշխատանքային ռիսկերի կառավարման և աշխատանքի աուդիտի իրականացման գործում աջակցելու համար: • **Ռեսուրսների արդյունավետություն և աղտոտման կանխարգելում ու հսկողություն**. Աջակցել վերականգնվող էներգետիկայի, էներգախնայողության, շրջանաձև տնտեսության և վտանգավոր թափոնների կառավարման ծրագրերի, այդ թվում ենթակառուցվածքների եւ համակարգերի, որպեսզի խրախուսվի թափոնների տեսակավորումը, տեղում առանձնացումը և վերամշակումը: ԿԼԾ-ն և համապատասխան ԵՄ ստանդարտներն ներառել ծրագրի կառուցվածքում: Կլիմայի մեղմման և հարմարվողականության միջոցառումները պետք է համապատասխանեն ածխածնի չեզոքության ազգային լուծումներին: • **Առողջություն եւ անվտանգություն.** Աշխատանքային և համայնքային առողջության ու անվտանգության մշակույթ և գործելակերպեր, այդ թվում դրանց մշտադիտարկում՝ ծրագրի գնահատման և մոնիթորինգի միջոցով: Ճանապարհային անվտանգության եւ հաճախորդների կառավարումը տրանսպորտային ծրագրերի առաջնահերթ խնդիրներն են եւ կարող են ՏՀ միջոցներ պահանջվել: • **Հողի ձեռքբերում, ոչ կամավոր վերաբնակեցում և տնտեսական տեղահանություն.** Ամրապնդել աջակցությունը՝ ազդակիր համայնքների հետ շահագրգիռ կողմերի բովանդակային մասնակցային աշխատանք ապահովելու համար, մասնավորապես, կառավարության կողմից հողի ձեռքբերման կամ հողի փոխանցման միջոցով: Հատուկ ուշադրություն կհատկացվի խոցելի բնակչությանը, այդ թվում էթնիկ փոքրամասնություններին, ներքին տեղահանված անձանց և փախստականներին, որոնց վրա ծրագրերի ազդեցությունը կարող է անհամաչափ լինել: Այն դեպքում, երբ հողը զբաղեցնողները չունեն օրինական իրավունքներ, հաճախորդները պետք է փոխհատուցում և ապրուստի միջոցների վերականգնում ապահովեն՝ օրենքով սահմանված կարգով և Բանկի քաղաքականության պահանջներին համապատասխան: • **Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական պաշարների կայուն կառավարում** . Վերականգնվող էներգիայի, քաղաքային և տրանսպորտային ենթակառուցվածքների ծրագրերը կարող են խաթարել կամ մասնատել զգայուն կենսամիջավայրերը: Ապահովել զգայուն վայրերում կատարվեն իրականացվող ծրագրերի՝ կենսաբազմազանության ազդեցության գնահատումներ և, ըստ անհրաժեշտության, տրամադրել ՏՀ աջակցություն՝ խուսափելու կամ նվազագույնի հասցնելու այդ ազդեցությունները կամ, պահանջի դեպքում, մշակել և իրականացնել փոխհատուցումների մեխանիզմ: Կառավարությանը և հաճախորդներին օգնել մշակել և իրականացնել ծրագրի հետ կապված՝ կենսաբազմազանության գործողությունների ծրագրեր և ուսումնասիրել էկոհամակարգի վերականգնման հնարավորություններ: • **Մշակութային ժառանգություն**. Ապահովել մշակութային ժառանգության պաշտպանությունն ու պահպանումը՝ խորհրդակցելով հիմնական շահագրգիռ կողմերի հետ: Մշակութային ժառանգության նշանակալի տարրեր հայտնաբերելու դեպքում Բանկը կնպաստի մշակութային ժառանգության մասին իրազեկմանը, գնահատմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև տեղական համայնքների համար հնարավոր սոցիալ-տնտեսական օգուտներ քաղելուն: Բոլոր բարձր ռիսկայնության ծրագրերի համար, որոնք ներառում են մշակութային վայրերի/օբյեկտների վրա ազդեցություն, Մշակութային ժառանգության կառավարման ծրագրեր կիրականացվեն: • **ՖՀ.** Ապահովել, որ ՖՀ գործընկերները ունենան ԲՍ համապատասխան կարողություններ և ռիսկերի կառավարման ընթացակարգեր: • **Ինստիտուցիոնալ հզորացում և կարողությունների զարգացում**. ՏՀ-ի միջոցով ԿԶԵԲ-ը կաշխատի գտնել հնարավորություններ՝ պետական և մասնավոր հատվածներում կարողությունների զարգացման, նոր բնապահպանական եւ սոցիալական նախաձեռնությունների մշակման, ինչպես նաև ազգային, համակարգային բնապահպանական ու սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված լավագույն փորձի խթանման համար:
• **Սփյուռքի և ոչ սփյուռքի աղբյուրներից ՕՈՒՆ-ի անբավարար մակարդակ.**	Միջին	Բարձր	
• **Կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիությունը** կարող է բացասաբար ազդել քաղաքային ենթակառուցվածքների և ագրոբիզնեսի ծրագրերի կենսունակության վրա	Միջին	Բարձր	
• **Արժույթի անկայունությունը** կարող է ազդել պետական պարտքի մատչելիության, պետական ֆինանսական միջոցների և բանկային հատվածի ակտիվների որակի վրա	Միջին	Միջին	
• Պետական կառավարման շրջանակներում սահմանափակ **ինստիտուցիոնալ կարողությունները** կարող են հանգեցնել պետական ենթակառուցվածքային ծրագրերի նախապատրաստման և իրականացման հետաձգումների	Միջին	Միջին	

Բարձր Միջին Ցածր

8. Դոնոր կազմակերպությունների գործընկերությունների գնահատում

European Bank
for Reconstruction and Development

Երկրի նոր ռազմավարության ժամանակահատվածի կարիքների գնահատում

Երկրի նոր ռազմավարության նպատակներին հասնելու համար կարող են պահանջվել դոնորների կողմից տրամադրված միջոցներ, որպեսզի աջակցեն հետևյալ հիմնական ուղղություններով.

- ՄՖՀ-ների համար ռիսկերի բաշխման գործիքների տրամադրումը կարող է կանանց և երիտասարդների համար բարելավել ֆինանսական միջոցների հասանելիությունը:
- Կանաչ և կայուն տնտեսության անցումը արագացնելու համար կարող են պահանջվել խրախուսական դրամաշնորհներ և արտոնյալ վարկեր՝ խթանելու վերականգնվող էներգիայի արտադրությունը, բարձր արտանետումներ ունեցող աղբյուրներից անցումը և բարձրացնել ռեսուրսների արդյունավետությունը՝ միաժամանակ ամրապնդելով էներգետիկ անվտանգությունը:
- ՏՀ դրամաշնորհները կարևոր նշանակություն ունեն ՓՄՁ-ների համար խորհրդատվական ծառայությունների ֆինանսավորման, կորպորատիվ և բնակելի հատվածներում էներգաարդյունավետության ապահովման և պետական կառավարման կարողությունների ամրապնդման միտումով գնումների, ծրագրերի կառավարման և թվային փոխակերպման ոլորտներում:
- Ի լրումն, կապիտալ ծախսերի դրամաշնորհները կարող են անհրաժեշտ լինել կայուն և ներառական քաղաքային ու բնապահպանական ենթակառուցվածքների ֆինանսավորման համար՝ ուղղված մատչելի ենթակառուցվածքների, կլիմայի փոփոխությանը հարմարվողականության նախաձեռնություններին:

Դոնորների ֆինանսական միջոցների հնարավոր աղբյուրները

- Ակնկալվում է, որ Եվրամիությունը կշարունակի սատարել Հայաստանին ԿԶԵՎ (EFSD) և ԿԶԵԲ+ (EFSD+) գործիքներով՝ կենտրոնանալով համայնքային ենթակառուցվածքների, արդյունաբերական դիմակայունության, թվային վերափոխման, վերականգնվող էներգիայի և ֆինանսական ներառականության վրա: Այն կներառի չֆինանսավորվող երաշխիքներ, ինչպես նաև ՏՀ:
- Ակնկալվում է, որ Հայաստանում իրենց աշխատանքները կշարունակեն այնպիսի առանցքային երկկողմ դոնորներ, ինչպիսիք են Ճապոնիան, Չինական Թայբեյը և Լյուքսեմբուրգը: Այս դոնորները, ամենայն հավանականությամբ, կշարունակեն ՏՀ տրամադրել՝ աջակցելու զարգացման տարբեր ծրագրերի և քաղաքականության բարեփոխումներին: Կլիմայի հետ կապված ծրագրերը կարող են աջակցություն ստանալ կլիմայի փոփոխությունների դեմ պայքարում բարձր ազդեցությամբ համագործակցության (HIPCA) կողմից:
- Ակնկալվում է, որ Կանաչ կլիմայի հիմնադրամը (GCF), շրջակա միջավայրի համաշխարհային հիմնադրամը (GEF) և Կլիմայի ներդրումային հիմնադրամները (CIF) կշարունակեն առանցքային դերակատարում ունենալ Հայաստանի՝ կլիմայի հետ կապված ծրագրերի համար, տրամադրելով արտոնյալ վարկեր, աջակցելով ծրագրի նախապատրաստմանը, իրականացմանը, ինչպես նաև տրամադրելով ՏՀ դրամաշնորհներ՝ ուղղված քաղաքականության շուրջ խորհրդատվությանը, կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունության և կայունության ջանքերի հետագա ամրապնդմանը:
- Եվ վերջապես, կոնցեսիոն ռեսուրսները կշարունակվեն Բաժնետերերի հատուկ հիմնադրամի, Փոքր բիզնեսի ազդեցության հիմնադրամի և ՓՄՁ տեղական արժութային հատուկ հիմնադրամի միջոցով:

Մատչելիության ընտրված ցուցանիշներ

	ԿԶԵԲ տարածաշրջանային տոկոսային կետի դասակարգում[1]	
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն (ՊՄՀ, ընթացիկ. $)[2]	21,343	41%
ՊԱԶՆ Երկիր	Այո	կիրառելի չէ
ՊԱԶՆ որպես համախառն ազգային եկամուտի մասնաբաժին (%)[3]	1.21	30%
ՊԱԶՆ մեկ շնչի հաշվով ($ - ներկայիս գները)[3]	47.2	38%

Դոնորների տրամադրած ֆինանսական միջոցները վերջին ռազմավարության ժամանակահատվածում (€m)[4]



Ֆինանսական միջոցների օգտագործումը 2019-2023 թթ.[5]



1. Պարզ տոկոսային վարկանիշը ներկայացված որպես Հայաստանից ցածր ներկայացված ԿԶԵԲ տնտեսությունների մասնաբաժինը: 2. WDI (2022) 3. ՏՀԶԿ (2021) 4. Համատեղ ներդրված գումարների հաշվետվության մեթոդաբանությունը փոխվել է. նախկինում հիմնված էր հաճախորդի ստորագրությունների վրա, 2022 թվականից հիմնված է պարտավորությունների մակարդակով նախատեսված հատկացումների վրա: 2019-2023 թթ. ՏՀ տվյալները և 2022-2023 թթ. համատեղ ներդրումային ֆոնդերի գումարները հիմնված են հատկացումների վրա՝ պարտավորության մակարդակում, իսկ 2019-2021 թթ. համատեղ ներդրումային ֆոնդերի գումարները հիմնված են հաճախորդի ստորագրությունների վրա: 5. Հիմնված է կոնցեսիոն ռեսուրսների հիմնական Անցումային որակի վրա:

Հավելված

European Bank
for Reconstruction and Development

Պաշտոնական օգտագործում

Հավելված 1 - Քաղաքական գնահատական՝ 1-ին հոդվածի համատեքստում (1/6)

European Bank
for Reconstruction and Development

Հայաստանը նախորդ ռազմավարության ժամանակահատվածում շարունակել է հանձնառու մնալ Բանկի հիմնադրման մասին Համաձայնագրի 1-ին հոդվածում ամրագրված քաղաքական սկզբունքներին: Հայաստանի իշխանությունները բարեփոխումների իրականացման հարցում առաջընթաց են գրանցել, մասնավորապես արդարադատության ոլորտում եւ կոռուպցիայի դեմ պայքարում: Գենդերային հավասարության բարելավումը և խտրականության բոլոր ձևերի հաղթահարումը, ըստ համապատասխան միջազգային կազմակերպությունների, կարևոր մարտահրավերներն են մնացել:

Նախորդ ռազմավարության գրեթե ամբողջ ժամանակաշրջանում Հայաստանն առերեսվել է անվտանգության բարդ համատեքստի և քաղաքական բարձր աստիճանի բևեռայնացման հետ կապված նշանակալի մարտահրավերների: 2021 թ. հունիսին երկրում անցկացվեցին արտահերթ խորհրդարանական ընտրություններ, որտեղ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը վերահաստատեց իր խորհրդարանական մեծամասնությունը (թեպետ թուլացած): Հաջորդ խորհրդարանական ընտրությունները տեղի կունենան 2026 թվականին: Սակայն բողոքի ակցիաները, այդ թվում փողոցային ակցիաները, դեռևս շարունակվում են: Անվտանգության մտահոգություններն ու քաղաքական բևեռացումը շեղել են 2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին զանգվածային հակակառավարական ցույցերին և իշխանության անցնցում փոփոխությունից հետո ընդունված բարեփոխումների ծրագրից:

Չնայած քաղաքական և աշխարհաքաղաքական զգալի ճնշումներին, Հայաստանը շարունակում է քաղաքական բարեփոխումների ուղղությամբ առաջընթացի հասնելու հարցում վճռականություն ցուցաբերել: Չնայած, որ մարտահրավերները շարունակում են մնալ, հավելյալ միջոցներ են ձեռնարկվել օրենքի գերակայության բարելավման, ոստիկանության համակարգի բարեփոխումների իրականացման, դատական համակարգի անկախության, արդյունավետության, հաշվետվողականության և հակակոռուպցիոն մեխանիզմների ամրապնդման ուղղությամբ: Կարևոր քայլերից մեկը Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թթ. գործողությունների ծրագրի ընդունումն էր:

Խրախուսելով Հայաստանին իր ձեռքբերումների համար՝ համապատասխան միջազգային կազմակերպությունները, միևնույն ժամանակ, առանձնացրել են բարեփոխումների գործընթացի շարունակման կարևորությունը՝ զուգահեռաբար ապահովելով ժողովրդավարական սկզբունքների ու մարդու իրավունքների լիարժեք համապատասխանությունը: Ընդգծվել է երկրում մարդու իրավունքների իրավիճակի բարելավման համար լրացուցիչ ջանքեր գործադրելու անհրաժեշտությունը, մասնավորապես ընտանեկան բռնության, ատելության խոսքի և բոլոր հիմքերով խտրականության վերացման ուղղությամբ, որոնք շարունակում են կարևոր մարտահրավերները մնալ:1

Արտաքին քաղաքականությունը դիվերսիֆիկացնելուն ուղղված վերջին ժամանակներում գործադրած ջանքերով Հայաստանն ազդարարել է ԵՄ-ի հետ գործընկերության և համագործակցության ամրապնդմանն ու խորացմանը միտված մտադրության մասին, որը հիմնված է համընդհանուր արժեքների վրա: Այս նպատակով երկու կողմերը 2024 թ. փետրվարին պայմանավորվել են մեկնարկել ԵՄ-Հայաստան գործընկերության նոր օրակարգի շուրջ աշխատանքները՝ բոլոր հարթություններում համագործակցության համար ավելի հավակնոտ համատեղ առաջնահերթություններ սահմանելով: Նոր գործընկերության օրակարգը նաև նպատակ ունի բացահայտելու Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) ողջ ներուժը, որը կնքվել է 2017 թ. նոյեմբերին:2 2024 թ. հուլիսին ԵՄ-ն Հայաստանի հետ երկխոսություն է սկսել վիզային ռեժիմի ազատականացման շուրջ:

Ազատ ընտրություններ և ներկայացուցչական կառավարություն

Ազատ, արդար և մրցակցային ընտրություններ

Հայաստանի Սահմանադրությունը երաշխավորում է գաղտնի քվեարկությամբ անցկացվող համընդհանուր, հավասար և ուղղակի ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա անցկացվող ազատ ընտրություններ:

1· ԵՄԽՎ. Հայաստանի կողմից ստանձնած պարտավորությունների և հանձնառությունների կատարումը, 2024 թվականի հունիսի 26-ի թիվ 2560 բանաձև. ԵՄ-Հայաստան. Համատեղ հայտարարություն Գործընկերության կոմիտեի 5-րդ նիստի վերաբերյալ, Երևան, 2024 թ. հունիսի 12, Եվրոպական հանձնաժողով (ԵՀ): Գործընկերության իրականացման հաշվետվություն Հայաստանի, Բրյուսելի, 2024 թ. փետրվարի 9 և ԵՄ-Հայաստան Մարդու իրավունքների վերաբերյալ 13-րդ երկխոսություն, Երևան, 2024 թ. հունվարի 19:
2. ԵՄ-Հայաստան. Համատեղ մամուլի հաղորդագրություն՝ Գործընկերության խորհրդի 5-րդ նիստից հետո, փետրվարի 13, 2024 թ.

Հավելված 1 - Քաղաքական գնահատական՝ 1-ին հոդվածի համատեքստում (2/6)

European Bank
for Reconstruction and Development

Նախորդ ռազմավարության ժամանակահատվածում Հայաստանը 2021 թվականի հունիսին արտահերթ խորհրդարանական ընտրություններ է անցկացրել՝ 2020 թվականի նոյեմբերին Ադրբեջանի հետ հրադադարի մասին հայտարարության ստորագրումից հետո հակակառավարական բողոքի ակցիաների արդյունքում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից ղեկավարվող միջազգային ընտրությունների դիտորդական առաքելությունը (IEOM) եզրակացրեց, որ ընտրությունները «կարճ ժամանակահատվածի համար մրցակցային էին եւ, ընդհանուր առմամբ, լավ անցկացված»: Այնուամենայնիվ, դրանք բնութագրվում էին ինտենսիվ բևեռացմամբ և մթագնված հիմնական մրցակիցների շրջանում ավելի ու ավելի բորբոքված հռետորաբանությամբ»: [3]

Արձագանքելով միջազգային երկարատեւ մտահոգություններին՝ Հայաստանը բարեփոխեց իր Ընտրական օրենսգիրքը՝ համաձայն Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի առաջարկությունների: Ողջունելով փոփոխությունները և գովաբանելով իշխանություններին օրենսդրական գործընթացի ներառականության ու թափանցիկության ապահովման համար՝ համապատասխան միջազգային կազմակերպությունները Հայաստանին կոչ են արել իրականացնել ընտրական շրջանակի վերաբերյալ առկա առաջարկությունները, մասնավորապես՝ հանրային ռեսուրսների չարաշահման ու քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման առնչությամբ:4

Լիազորությունների տարանջատում և զսպումների ու հակակշիռների արդյունավետ մեխանիզմ

Հայաստանի Սահմանադրությունը նախատեսում է լիազորությունների տարանջատում օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի միջև:

Հայաստանը խորհրդարանական հանրապետություն է, որտեղ գործադիր իշխանությունը տրված է վարչապետին՝ որպես կառավարության ղեկավար: Վարչապետն առաջադրում է իր տեղակալների և բոլոր նախարարների թեկնածուներին, համակարգում նրանց աշխատանքը և որոշում կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները: Վարչապետը նաև ղեկավարում է Անվտանգության խորհուրդը: Ազգային անվտանգության ծառայությունը, արտաքին հետախուզությունը և պետական պահպանության ծառայությունը գտնվում են վարչապետի անմիջական ենթակայության տակ:

Նախագահը, որը պետության ղեկավարն է, սակայն որի լիազորությունները 2015 թվականի դեկտեմբերի հանրաքվեից հետո սահմանադրական փոփոխություններով կրճատվել են՝ դառնալով հիմնականում արարողակարգային և ներկայացուցչական, ընտրվում է խորհրդարանի կողմից՝ յոթ տարի ժամկետով: Ներկա նախագահն ընտրվել է 2022 թ. մարտին՝ իր իրավանախորդի հրաժարականից հետո:

Օրենսդիր իշխանությունը վերապահվում է Ազգային ժողովին (Խորհրդարան), որն ընտրվում է համամասնական ընտրակարգով, հինգ տարի ժամկետով և կազմված է առնվազն 101 պատգամավորից: Կառավարություն կազմելու համար անհրաժեշտ է կայուն մեծամասնություն, որը սահմանվում է որպես տեղերի 54%: Այն դեպքում, երբ հաղթող կուսակցությունը կամ դաշինքը ստանում է առնվազն 50% տեղ, գումարած մեկը, բայց 54% -ից պակաս է ստանում, նրան լրացուցիչ տեղեր են տրվում՝ անհրաժեշտ կայուն մեծամասնությունն ապահովելու համար: Եթե հաղթող կուսակցությունը կամ դաշինքը ստանան նախապես հատկացված 101 տեղերի
ավելի քան երկու երրորդը, ապա մյուս մրցակիցներին, ովքեր ստացել են տեղեր, լրացուցիչ տեղեր են հատկացվում՝ հավաքական մեկ երրորդ փոքրամասնություն կազմելու նպատակով: 2021 թ.-ի հունիսի արտահերթ ընտրություններից հետո վերագրվել է ընդհանուր առմամբ 107 տեղ:

Սահմանադրական դատարանը, որը բաղկացած է 9 անդամից, ղեկավարում է սահմանադրական արդարադատությունը: 2020 թվականին Սահմանադրական դատարանի շուրջ ստեղծված իրավիճակը, երբ դատարանի կազմի և դրա փոփոխման հետ կապված մարտահրավերների շուրջ կոնֆլիկտ առաջացավ, դարձավ ներքին լարվածության և միջազգային մտահոգության առարկա: [5]

Չնայած ժողովրդավարական զսպումների և հակակշիռների առկայությանը, դրանք կարող են ավելի ամրապնդվել, մասնավորապես, խորհրդարանական վերահսկողությունը:

3. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելություն. Հայաստանի Հանրապետություն, արտահերթ խորհրդարանական ընտրություններ, 20 հունիսի 2021թ., վերջնական զեկույց, Վարշավա, 27 հոկտեմբերի 2021թ., էջ 1:
4. ԵԽԽՎ. Թիվ 2560 բանաձև, հունիսի 26, 2024 թ., պարբերություններ 8 և 11:
5. ԵՀ. Գործընկերության իրականացման հաշվետվություն Հայաստանի մասին, Բրյուսել, 16 դեկտեմբերի 2020թ., էջ 9-10:

Հավելված 1 - Քաղաքական գնահատական՝ 1-ին հոդվածի համատեքստում (3/6)

European Bank
for Reconstruction and Development

Ընտրված պաշտոնատար անձանց՝ կառավարելու փաստացի լիազորություն

Ընտրված պաշտոնյաներն ունեն կառավարելու փաստացի իրավասություն: Քաղաքացիական իշխանությունները, ընդհանուր առմամբ, պահպանել են արդյունավետ վերահսկողություն ռազմական և անվտանգության ուժերի նկատմամբ:

Քաղաքացիական հասարակություն, մեդիա և մասնակցություն

Քաղաքացիական հասարակության մասշտաբը և անկախությունը

Հայաստանի քաղաքացիական հասարակությունը մնացել է բազմազան և ուժեղ: Հայաստանում գրանցված են ավելի քան 5,600 հասարակական կազմակերպություններ և ավելի քան 6,000 հիմնադրամներ, չնայած նրանցից շատերը գործող չեն: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ-ները) ակտիվորեն ներգրավված են երկրի զարգացումներում, այդ թվում կարևոր դեր խաղալով հակակոռուպցիոն հանձնառությունների մշտադիտարկման հարցում: [6] Սակայն ՔՀԿ-ները երբեմն աշխատանքային մարտահրավերների առջև են կանգնում: Երկրի քաղաքացիական դերակատարները, որոնք պաշտպանում են խոցելի և մարգինալացված խմբերի իրավունքները, կարող են ատելության խոսքի ենթարկվել:[7] Թեև ՔՀԿ-ների համար տարբեր աղբյուրներից ֆինանսավորում փնտրելու և օգտագործելու սահմանափակումներ չկան, տեղական ֆինանսավորման հասանելիությունը մնում է մարտահրավեր, որոնց մեկ մասն ապավինում են օտարերկրյա դոնորների աջակցությանը:

Առանց գրաքննության գործող լրատվամիջոցների անկախությունը և բազմակարծությունը

Հայաստանում լրատվամիջոցների միջավայրը բազմազան է: Հեռուստատեսությունը շարունակում է մնալ քաղաքականության մասին տեղեկատվության առաջնային աղբյուրը, մանավանդ մայրաքաղաքից դուրս, չնայած արագորեն մեծանում է առցանց լրատվամիջոցների ու սոցիալական ցանցերի դերը: Թեեւ մեդիա միջավայրը բազմակարծ է, հայաստանյան լրատվամիջոցները բնութագրվում են մեծ բևեռացմամբ, ինչն արտացոլում է քաղաքական դաշտի բևեռացումը:

Հանրային հեռուստատեսությունն ընկալվում է որպես պրո-իշխանական խմբագրական քաղաքականություն կրողը: Բազմաթիվ մասնավոր հեռարձակողներ ուժեղ քաղաքական կապեր ունեն: Լրատվամիջոցների մեծ մասը, որոնք հիմնական քաղաքական և առևտրային շահերի հետ են կապված, շարունակում են ճնշումների ենթարկվել իրենց խմբագրական քաղաքականության համար: Չնայած զրպարտության ապաքրեականացմանը և ԶԼՄ-ների սեփականության թափանցիկությունը երաշխավորող օրենսդրության իրականացմանը, Հայաստանի իրավական դաշտը բավարար չափով չի պաշտպանում մամուլի ազատությունը, և այդ մասով, նույնպես, չի համապատասխանում եվրոպական չափանիշներին: Հայաստանի մեդիա կազմակերպությունները մտահոգված էին 2021 թվականին քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխություններով, որոնք վերաբերում էին զրպարտության առավելագույն տուգանքների մեծացմանը: [8]

Քաղաքացիական և քաղաքական մասնակցության բազմաթիվ ուղիներ

Հայաստանի քաղաքացիներն, ընդհանուր առմամբ, օգտվում են քաղաքացիական և քաղաքական մասնակցության բազմաթիվ ուղիներից: Նոր օրենսդրական ակտերի վերաբերյալ հանրային լսումները պարտադիր և տեղեկատվությունը, ողջամտության սահմանում, համապարփակ հասանելիություն ունի, սակայն բարելավման տեղ դեռևս կա: Շատ պետական կառույցներ չեն համագործակցում լրագրողներին և հանրությանն պահանջված ժամկետում բավարար և համապարփակ տեղեկատվություն տրամադրելու հարցում: Տեղեկատվության ազատության մասին օրենքը ունի թերություններ և համապատասխան միջազգային կազմակերպությունները ողջունել են նոր նախագիծ ներկայացնելու որոշումը: ԵՄ-ն եւ GRECO-ն խրախուսում են քաղաքացիական հասարակության ավելի բովանդակային մասնակցությունն օրենսդրական առաջարկներին և որոշումների կայացման վաղ փուլերում հանրային լսումները: 9

6. GRECO. Հայաստանի գնահատման հաշվետվություն, Հինգերորդ գնահատման փուլ, 18 ապրիլի 2024թ., էջ 8:
7. ԵՀ. Գործընկերության իրականացման հաշվետվություն Հայաստանի մասին, 9 փետրվարի 2024թ., էջ 13:
8. ԵՀ. Գործընկերության իրականացման հաշվետվություն Հայաստանի մասին, Բրյուսել, 17 մայիսի, 2022 թ., էջ 6; գործընկերության իրականացման հաշվետվություն Հայաստանի մասին, 9 փետրվարի, 2024 թ., էջ 4; ԵԽԽՎ. Թիվ 2560 բանաձև, հունիսի 26, 2024 թ., պարբերություն 20, ԵԱՀԿ/ ԺՀՄԻԳ ԵՕՄ: Արտահերթ խորհրդարանական ընտրություններ, 20 հունիսի 2021թ., վերջնական զեկույց, էջ 2021թ., 17:ԵԽԽՎ. Վեհաժողովի մոնիտորինգի ընթացակարգի առաջընթացը (2024թ. հունվար-դեկտեմբեր), 2580 բանաձև, 2025թ. հունվարի 27, պարբերություն 4.1.
9. ԵՀ. Գործընկերության իրականացման հաշվետվություն Հայաստանի մասին, 9 փետրվարի 2024թ., էջ 13: Համատեղ հայտարարություն Գործընկերության կոմիտեի 5-րդ նիստի վերաբերյալ, Երևան, 12.06.2024, ԵԽԽՎ: Թիվ 2560 բանաձև, պարբերություն 19, GRECO: Հայաստանի գնահատման հաշվետվություն, Հինգերորդ գնահատման փուլ, պարբ. 25-26, 71:

Հավելված 1 - Քաղաքական գնահատական՝ 1-ին հոդվածի համատեքստում (4/6)

European Bank
for Reconstruction and Development

Հայաստանն ունի բազմակուսակցական համակարգ: Գաղափարական բազմակարծությունը և քաղաքական կուսակցությունների ազատ գործելու ազատությունը երաշխավորվում են Սահմանադրությամբ և իրականացվում գործնականում: 2021 թ. հունիսի արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցել են, ընդհանուր առմամբ, 21 քաղաքական կուսակցություն և չորս դաշինք: Դրանցից երեքը մուտք են գործել խորհրդարան, այդ թվում երկու ընդդիմադիր դաշինքներ: Ընդդիմադիր կուսակցությունները կարող են ազատորեն քարոզարշավ վարել և հակադրվել կառավարության նախաձեռնություններին: Այնուամենայնիվ, ավելորդ բևեռացումը խոչընդոտում է իշխող մեծամասնության և ընդդիմության միջև համագործակցությանը և հանգեցնում քաղաքական հակառակորդների համակողմանի խարանմանը, խորհրդարանի աշխատանքին ընդդիմության կողմից բոյկոտներին և իշխող կոալիցիայի կողմից որակյալ մեծամասնության որոշումների լայնածավալ օգտագործմանը: 10

Օրենքի գերակայություն և արդարադատության հասանելիություն

Օրենքի գերակայություն

Օրենքի գերակայությունն ամրագրված է Հայաստանի Սահմանադրությամբ, և գործում են անհրաժեշտ օրենսդրական ու ինստիտուցիոնալ երաշխիքները: Արդար դատաքննության իրավունքը, նույնպես, ամրագրված է Սահմանադրությամբ, չնայած դատական համակարգում մնացած մարտահրավերները խարխլում են այդ իրավունքը: 2023 թվականի նոյեմբերին Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) Հռոմի կանոնադրության վավերացումը կարևոր քայլ էր հաշվետվողականության մշակույթի զարգացման գործում: [11]

Դատական համակարգի անկախությունը

Հայաստանի Սահմանադրությունն արգելում է ցանկացած միջամտություն արդարադատության իրականացման գործընթացին, որը պետք է իրականացվի միայն դատարանների կողմից՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2022 թվականի հուլիսին ՀՀ կառավարությունը հաստատեց դատահիրավական բարեփոխումների 2022-2026 թթ. ռազմավարությունը և դրան կից գործողությունների ծրագիրը: Ընդհանուր առմամբ, նախորդ ռազմավարության ժամանակահատվածում որոշ առաջընթաց է գրանցվել արդարադատության ոլորտում, ներառյալ դատավորների բարեվարքության ստուգումների ներդրումը, դատավորների նշանակման ընթացակարգերի հաստատումը և դատական օրենսգրքի փոփոխությունների ընդունումը՝ արդարադատության համակարգի անկախության և թափանցիկության մեծացման համար: Միևնույն ժամանակ, մարտահրավերները շարունակվում են, և դատավորների անկախության ու արդարադատության ոլորտի հաշվետվողականության ամրապնդման համար հետագա քայլեր են անհրաժեշտ: [12]

Կառավարությունն ու քաղաքացիները հավասարապես ենթարկվում են օրենքին

Սահմանադրությունը երաշխավորում է բոլոր քաղաքացիների հավասարությունն օրենքի առջև: Այս սկզբունքը, ընդհանուր առմամբ, պահպանվել է նախորդ ռազմավարության ժամանակահատվածում: Ձեռնարկվել են քայլեր անպատժելիության դեմ պայքարի և իրավապահ մարմինների հաշվետվողականության բարելավման ուղղությամբ, այդ թվում ոստիկանության համակարգի բարեփոխմամբ: Քրեական եւ քրեական դատավարության օրենսգրքերի 2021 թվականին ընդունումը կարևոր բարելավում է դիտվում: Դատախազությունում անկախության ամրապնդումը շարունակում է խնդիր մնալ: [13]

Կոռուպցիայի կանխարգելման արդյունավետ քաղաքականություններ և ինստիտուտներ

Հայաստանի իշխանությունները նախորդ ռազմավարության ժամանակահատվածում շարունակել են կոռուպցիայի դեմ պայքարում մեծ վճռականություն ցուցաբերել: Ստեղծվել կամ բարեփոխվել են հակակոռուպցիոն մասնագիտացված մարմինները, ներառյալ հակակոռուպցիոն դատարանը: Հակակոռուպցիոն քաղաքականությունն ու շրջանակն ուժեղացվել են.

10. ԵՄԽՎ.. Թիվ 2560 բանաձև., պարբերություններ 12-14:
11. ԵՀ. Գործընկերության իրականացման հաշվետվություն Հայաստանի մասին, 9 փետրվարի 2024թ., էջ 2:
12. Նույն տեղում, էջ 6, ԵՄԽՎ. Թիվ 2560 բանաձև, պարբերություններ 15-17: ԵՄԽՎ՝ 2580 բանաձև, կետ 4.1.
13. ԵՀ. Գործընկերության իրականացման հաշվետվություն Հայաստանի մասին, 9 փետրվարի 2024թ., էջ 6-7:

Հավելված 1 - Քաղաքական գնահատական՝ 1-ին հոդվածի համատեքստում (5/6)

European Bank
for Reconstruction and Development

Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրն ընդունվել են 2023 թվականի հոկտեմբերին: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» կազմակերպության Կոռուպցիայի ընկալման ինդեքսով (ԿԸՀ/CPI) 2023 թվականին Հայաստանը ճանաչվել է որպես «զգալի բարելավող երկիր», որը չափվում է 2018 թվականից սկսած երկրի ձեռքբերումներով (2023 թ.-ին Հայաստանը ստացել է 47/100 միավոր՝ 2018 թ.-ի 35/100-ի դիմաց): 2023 թվականին Հայաստանը ԿԸՀ 180 երկրների շարքում 62-րդ տեղն է զբաղեցրել: [14] Այնուամենայնիվ, Հայաստանի հակակոռուպցիոն շրջանակները դեռևս թույլ կողմեր ունի, այդ թվում բիզնեսի բարեվարքությունը (թույլ օրինապահություն), շահերի բախումը (հստակ կարգավորիչ համակարգի բացակայություն), դատախազության անկախության բացակայությունը և կոռուպցիոն հանցագործությունների սահմանափակ կիրարկումը: [15]

Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ

Խոսքի, տեղեկատվության, կրոնի, խղճի, տեղաշարժի, միավորումների, հավաքների և մասնավոր սեփականության ազատություն

Հայաստանը հանձնառու է մարդու իրավունքների է հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքին՝ համաձայն իր ազգային օրենսդրության և միջազգային պարտավորություններին որպես ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի եւ Եվրոպայի խորհրդի անդամ:

Հայաստանը 2020 թվականին ավարտել է ՄԱԿ ՓԳՀ համընդհանուր պարբերական վերանայման (UPR) երրորդ փուլը: Ստացված 252 առաջարկություններից երկիրն աջակցություն է հայտնել 239-ին (2015 թ. 2-րդ փուլի համեմատ 54% աճ): [16]

Հայաստանը 2023 թ. սեպտեմբերին ընդունել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային նոր ռազմավարությունը և 2023-2025 թթ. Մարդու իրավունքների պաշտպանության ազգային գործողությունների ծրագիրը: 2023 թվականի նոյեմբերին երկիրը վավերացրել է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 13-րդ արձանագրությունը, որը վերաբերում է մահապատժի վերացմանը բոլոր հանգամանքներում:

Ողջունելով Հայաստանում տեղի ունեցող դրական զարգացումները՝ համապատասխան միջազգային կազմակերպությունները կոչ են արել ավելի մեծ չափով բարելավել մարդու իրավունքների վիճակը, հատկապես բոլոր հիմքերով խտրականության և ատելության խոսքի հետ կապված: [17]

Քաղաքական ներառականություն կանանց, ինչպես նաև էթնիկ և այլ փոքրամասնությունների համար

Հայաստանի Սահմանադրությամբ սահմանվում է, որ բոլոր հիմքերով խտրականությունն արգելվում է: Այնուամենայնիվ, ընտանեկան բռնությունը, ատելության խոսքը և խտրականությունը, որոնք պայմանավորված են սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ և զգայուն թեմա են հայ հասարակության համար, շարունակում են մարդու իրավունքների ոլորտում Հայաստանի հիմնական մարտահրավերները մնալ: [18]

Օրենքի նախագիծը կառավարության քննարկմանն է ներկայացվել է 2020 թ.-ից, սակայն դեռևս չի ընդունվել: Պատշաճ կարգավորումների և ոստիկանության թույլ կարողությունները հանգեցնում են ԼԳԲՏԻՔ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների անարդյունավետ հետաքննությունների:[19]

14. Թրանսփարենսի Ինթերնեշնլ. Կոռուպցիայի ընկալման համաթիվը 2023թ.
15. ԵՀ. Գործընկերության իրականացման հաշվետվություն Հայաստանի մասին, 9 փետրվարի 2024թ., էջ 6-7; ԵԽԽՎ. Թիվ 2560 բանաձև, պարբերություն 18: 2024 թվականի հուլիսին Էկոնոմիկայի նախարարության կողմից Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունումը և 2024 թվականի մայիսին խորհրդարանի կողմից քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունները միտված են այդ բացերի շտկմանը:
16. ՄԱԿ ՓԳՀ. UPR – Հայաստան, երրորդ փուլ, աշխատանքային խմբի հաշվետվություն, 18 մարտի 2020թ
17. ԵՀ. Գործընկերության իրականացման հաշվետվություն Հայաստանի մասին, 2024 թ. փետրվարի 9, էջ 3, ԵՄ-Հայաստան Մարդու իրավունքների վերաբերյալ 13-րդ երկխոսություն, 2024 թ. հունվարի 19, ԵԽԽՎ: Թիվ 2560 բանաձև, պարբերություն 6:
18. ՄԱԿ ՓԳՀ UPR – Հայաստան, երրորդ փուլ, ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի հաշվետվություն, 13 նոյեմբերի, 2019թ
19. ԵՀ. Գործընկերության իրականացման հաշվետվություն Հայաստանի մասին, 9 փետրվարի 2024թ., էջ 5:

Հավելված 1 - Քաղաքական գնահատական՝ 1-ին հոդվածի համատեքստում (6/6)

European Bank
for Reconstruction and Development

Գենդերային հավասարությունը և կանանց իրավազորումը շարունակում են մնալ կարևորագույն խնդիրներ: Թեև կանայք աղջիկները Հայաստանի բնակչության 52.2%-ը և բարձրագույն կրթություն ունեցողների 56%-ն են կազմում, նրանք բավարար չափով ներկայացված չեն որոշումներ կայացնող և բարձր պետական պաշտոններում, չնայած երկրի առաջին կին գլխավոր դատախազի վերջերս նշանակմանը և քաղաքական կուսակցություններում կանանց համար նախատեսված 30% քվոտային (2018 թ. խորհրդարանական ընտրություններում 25%-ից աճ): Ներկա կառավարությունում, որը բաղկացած է վարչապետից, երկու տեղակալներից և 12 նախարարներից, ընդամենը երկու կին նախարար կա: Խորհրդարանի ներկա կազմում պատգամավորների 35.5%-ը կանայք են, ինչը զգալի բարելավում է նախորդ խորհրդարանի 24%-ի համեմատ: Ներկայումս մշակվում է գենդերային հավասարության նոր ռազմավարության նախագիծը: Կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը շարունակում են մտահոգիչ մնալ: [20] Որպես դրական քայլ, 2021 թ. վերանայված քրեական օրենսգրքով ընտանեկան բռնության համար քրեական պատասխանատվություն է նախատեսվում, իսկ հանցագործների համար ավելի խիստ պատիժներ՝ ներառյալ ազատազրկում: Միևնույն ժամանակ, Հայաստանը դեռևս չի վավերացրել 2017 թվականին ստորագրված Ստամբուլի կոնվենցիան:

Ակնկալվում էր, որ խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքի նախագծի փոփոխությունները կհաստատվեն 2022 թվականի առաջին կեսին, սակայն մինչ օրս որևէ առաջընթաց չի արձանագրվել: Ժամանակակից հայ հասարակությունը էթնիկապես հիմնականում միատարր է: Օրենքը նախատեսում է մինչև չորս տեղ խորհրդարանում, որոնք վերապահված են չորս ամենամեծ ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրի համար (եզդիներ, ռուսներ, ասորիներ և քրդեր):

Ազատություն ոտնձգությունից, ահաբեկումից և խոշտանգումներից

ՀՀ Սահմանադրությունը հստակ արգելում է խոշտանգումները, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը:

Հայաստան կատարած վերջին հերթական այցի վերաբերյալ իր նախնական դիտարկումներում Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման հարցերով եվրոպական կոմիտեն (CPT) բարձր է գնահատել իշխանությունների հետ գերազանց համագործակցությունը և նշել, որ վատ վերաբերմունքի հետ կապված իրավիճակն, ընդհանուր առմամբ, բարելավվել է 2019 թվականի հերթական այցի համեմատ, որտեղ ոչ փոքր դեր է ունեցել 2022 թվականին Քրեական դատավարության նոր օրենսգրքի գործողության մեջ մտնելու հանգամանքը: Այնուամենայնիվ, պատվիրակությունը նաև նշել է ոստիկանության կողմից բերման ենթարկված անձանց նկատմամբ վերջին շրջանում ֆիզիկական վատ վերաբերմունքի, ինչպես նաև ձերբակալության պահին ուժի չափից ավելի կիրառման վերաբերյալ որոշ պնդումներ: [21]

20. Նույն տեղում, էջեր 4-5, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՆԴ: Արտահերթ խորհրդարանական ընտրություններ, հունիսի 20, 2021թ., վերջնական զեկույց, էջեր 3, 6, 12:
21. CPT. Նախնական դիտարկումներ Հայաստան 2023 թվականի սեպտեմբերի 12- 22-ը կատարած հերթական ժամանակ, Ստրասբուրգ, 2024 թվականի մարտի 1: